

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک جريدة يومية سياسية وأدبية - اليوم الثامن والعشرون من شهر ربيع الأول سنة 1424

1500 Լ.Ո. 76րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 9 (21352) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 17 ՄԱՐՏ 2003 10 ԷՁ

ՎԱՐԱՐԱՂԵԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ԳԾՈՎ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ ԵՐԿՈՒՍՏԵՔ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ԼՈՒԾՈՒՄ ՄԸ ԳՏՆԵԼՈՒ ԻՐ ԺԻԳԵՐԸ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Երոպայի եւ Երասիոյ հարցերու գծով տեղակալ Էլիզաբեթ Ճոնսը Ներկայացուցիչներու Տան մէջ իր ներկայացուցած վեկուցումին ընթացքին յայտարարած է, թէ ԵԱՀԿի Միւսքի խմբակի նախագահները յոյս ունին, որ Հայաստանի եւ Արարկայի իշխանութիւնները կը դադարեն քաղաքական կամք՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման համար: Ճոնսի համաձայն, «այս տարին Հայաստանի եւ Արարկայի մէջ նախագահական ընտրութիւններու տարի է, եւ այդ պատճառով կողմերէն ոչ մէկը կը համաձայնի ընդունիլ քաղաքական լուծումներ, որոնք անհրաժեշտ են տագնապի խաղաղ լուծման համար»: Արտաքին գործոց նախարարի օգնականը դիտել տուած է, թէ Միացեալ Նահանգներ կը շարունակեն տագնապի լուծման համապարփակ եւ երկուստեք ընդունելի լուծման որոնումը:

ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ՄԷՋ ԳՈՒՄԱՐԱԾ ԻՐԵՆՑ ԺՈՂՈՎԵՆ ԵՏՔ՝ ՊՈՒՇ, ՊԼԵՐ ԵՒ ԱՍՆԱՐ ԿԸ ՄՆԱՆ ԱՆԴՐԴՈՒԵԼԻ, ՄԻՆՉ ԾԻՐԱՔ, ՓՈՒԹԻՆ ԵՒ ՇՐԵՕՏԸՐ ԻՐԵՆՑ ԿԱՐԳԻՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԽՍՏԻՒ ԸՆԴԴԻՄԱՆԱԼ

Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյն պատերազմի պատրաստութիւն կը տեսնէ գինուորական չորս մասերու բաժնելով երկիրը: Միեւնոյն ատեն սակայն, ան արտակարգ հրահրներ կ'ուղղէ ՄԱԿի գլխաւոր քննիչներուն՝ այցելելու համար Իրաք:

Չինուորական գոտիներու բաժանումը հրապարակուեցաւ Շարաթ գիշեր Յեղափոխական Հրամանատարութեան խորհուրդին կողմէ: ԻՆԱ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ բաժանումին նպատակն է ետ մղել որեւէ յարձակում եւ պարտութեան մատնել Իրաք ներխուժել փորձող ուժերը: Իրաք այսպիսի քայլ մը առած էր 1998 Դեկտեմբերին, երբ ամերիկեան ու բրիտանական ուժերը չորսօրեայ ուժեղացումի մը ձեռնարկած էին Իրաքեան քաղաքներու դէմ: Չորս գոտիներուն կեդրոնը կը կազմեն Պաղատան ու Սատտամի ծննդավայր՝ Թիքրիտը: Այս շրջանի հրամանատարութիւնը յանձնուած է Սատտամի կրտսեր գաւազանի՝ Բուսայի: Շրջանին ներկայացուցած կարեւորութեան համար, փոխ հրամանատար նշանակուած է պաշտպանութեան նախարար Սուլթան Հաշէմ Ահմէտը: Հիւսիսային շրջանը, որ կ'ընդգրկէ քրտարնակ քաղաքները, յանձնուած է Իրաքի թիւ երկու անձնակազմին՝ Իզաթ Իպրահիմի: Հարաւի շրի մեծամասնութիւնը ունեցող շրջանը յանձնուած է Սատտամի գարմիկներէն՝ Ալի Հասան Մաթէտի: Չորրորդ շրջան մը, որ կ'ընդգրկէ Պաղատան հարաւային շրի շրջանը յանձնուած է Խատար Հատիբի, որուն վստահուած է նաեւ սահմանապահ ուժերու հրամանատարութիւնը: Իրաքի ապահովական սպանարկութեանց եւ Սատտամի ՅԻՏԱՅԻՆ գինեալ ուժերուն հրամանատարութիւնը կը մնայ Սատտամի անդրանիկ գաւազանի՝ Ուսայի ձեռքերուն:



մէջ: ԻՆԱ աւելցուց, որ յիշեալ չորս գոտիները ուղղակի հրահանգներ պիտի ստանան Սատտամէն, որ բանակի ընդհանուր հրամանատարն է: Չորս գոտիներու անկախ հրամանատարութիւններուն բաւական լայն իրաւասութիւններ տրուած են, սակայն հակօդային հրթիռներու եւ օդային պաշտպանութեան միջոցներու դիմելու հրահանգը կը տրուի միայն նախագահին՝ Սատտամի կողմէ:

Իրաքեան մամուլը ալ երէկ պատերազմական միջնուրդ կը շեփոթահարէր՝ յայտարարելով, որ իրաքի «խիզախ» ժողովուրդը պատրաստ է պատերազմին եւ վճռած է պարտութեան մատնել ամերիկեան անարդար յարձակումը: «Սուրբ» կը գրէր, որ

Շար.ը՝ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԱԴՐԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԻՐԵՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ Հ. Յ. Դ. Ի ՀԱՄԱՄԱՄՆԱԿԱՆ ՑԱՆԿԸ ԿԸ ԳԼԽԱԻՈՐԷ ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Երէկ արտոնեցաւ Հայաստանի խորհրդարանական յանձնարարական խորհրդի ընտրութիւններուն (Մայիս 25) թեկնածուներու առաջադրման ժամկէտը: Հայաստանի քաղաքական դաշտին մէջ գործօն ուժերը՝ խորհրդարանական թէ արտախորհրդարանական, ներկայացուցիչ իրենց թեկնածուները: Յատկանշական է, որ կուսակցութիւններու թեկնածուներու ցանկերուն մէջ ընդգրկուած են նաեւ տուեալ կուսակցութեան անունով չեղող գործարարներ, մտաւորականներ, հասարակական գործիչներ:



վերջին ընտրութիւններուն՝ գործող նախագահ Ռոպէրթ Զոհրաբեանի պարտականութիւնները՝ Հ. Յ. Դ., Հայաստանի Հանրապետական կուսակցութիւն եւ «Օրինաց Երկիր», խորհրդարանական խորհրդի ներկայացուցիչներուն մասնակցին պիտի մասնակցին առանձին, առանց դաշինք կազմելու:

Շար.ը՝ էջ 10

ՏԻԳՐԱՆ ՆԱԳՂԱԼԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՒ

Հայաստանի Ոստիկանութեան լրատուական գրասենեակը պաշտօնական հաղորդագրութեամբ մը կը տեղեկացնէ, որ Հայաստանի Հանրային Պատկերասփիւռի եւ Չայնասփիւռի Ընկերութեան խորհուրդի նախագահ Տիգրան Նաղդալեանի սպանութիւնը պատուիրած ըլլալու յանցանքով ամբաստանուած Յովհաննէս Յարութիւնեան, ծանօթ՝ «Ապեր» ծածկանունով, ձերբակալուած է:

Յարութիւնեան Մարտ 14ին Երեւանի Բաբայեան փողոցի մէկ շէնքին մէջ ձերբակալուած է:

Իրաւապահ մարմինները պարզած են, որ Տիգրան Նաղդալեանի սպանութեան առաջ՝ Նոյեմբեր 2002ին, Յովհաննէս Յարութիւնեանի պատուէրով եւ փոխան 10 հազար ամերիկեան տոլարի՝ ճոն Յարութիւնեան եւ Յելիքս Առուստամեան, Յ. Յարութիւնեանի ազգական եւ Արարատ գիւղի բնակիչ Սուրիկ Մելքոնեանի սպանութիւնը «դասաւորած են» ականուած ինքնաշարժի միջոցով: Այս յանցագործութեան տարբեր փուլերուն մասնակցած են նաեւ Վազիֆ Պաղտասարեան եւ Յովիկ Աւագեան, որոնք եւս ձերբակալուած են: Նաղդալեանի սպանողը՝ ճոն Յարութիւնեան եւ անոր մեղսակից Յելիքս Առուստամեան նախապէս ձերբակալուած էին արդէն:

Նշենք, որ «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղաքական խորհուրդի անդամ Արամ Սարգսեանի ազգական՝ Յովհաննէս Յարութիւնեան, Գեղար Շախպալեանի պատուիրած էր կազմակերպել Նաղդալեանի սպանութիւնը՝ խոստանալով 50 հազար ամերիկեան տոլար:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՄ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹ

«Երկիր» կայքէջը հաւաստի աղբիւրներէ քաղելով իր տեղեկութիւնները հաղորդեց, որ Տիգրան Նաղդալեանի սպանութեան գծով երէկ ձերբակալուած է Արմէն Սարգսեան՝ «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղաքական խորհուրդի անդամ՝ նախկին վարչապետ Արամ Սարգսեանի եւ հանգուցեալ Վազիկ Սարգսեանի եղբայրը:

Հայաստանի Հանրային Պատկերասփիւռը իր կարգին հաղորդեց, որ Յովհաննէս Յարութիւնեան իրաւապահ մարմիններու խոստովանած է, թէ Նաղդալեանի սպանութեան գլխաւոր պատուիրատուն եղած է Արմէն Սարգսեան: Այս տեղեկութեան հիման վրայ իրաւապահ մարմինները նախաձեռնած են Սարգսեանի ձերբակալութեան:

«ՔԱՅԻՏԱ» Ի ԲԱՆԱԼԻ ԱՆԴԱՄ ՄԸ ԵՒՍ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

Փաքիստանցի եւ ամերիկացի պաշտօնատարներ երէկ հարցաքննուած են «Քայիտա» ցանցին բարձրաստիճան մէկ անդամը՝ Եասիթ Ժապի, որուն Լահորի մէջ ձերբակալութիւնը (Շաբաթ օր) նկարագրուած է իրրեւ այլ հարւած մը Ուսամա Պըն Լաւէնի ցանցին:

Տեղեկատուութեան նախարար Շէյխ Ռաշիտ յայտնած է, թէ կասկածելի կը պահանջուի Մ. Նահանգներու կողմէ:

Ըստ նախարարին, ձերբակալութիւնը յաջորդած է «Քայիտա»ի երրորդ ամէնէն բարձրաստիճան անդամին՝ Խալէտ շէյխ Մոհամէտի:

ՊԱՏՐԱՍՏՈՒՆՔ ԳԺՈՒՄ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ

ԷՁ 5

ԹԵԼ ԱԻԻ ԿՈՂՋՈՒՆԵ ՊՈՒՇԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵՍԻՆՑԻՔ՝ ԹԵՐԱՅԱՄԱՏ

Իսրայէլի ողջունեց Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը վերականգնելու Միացեալ Նահանգներու նախագահ Ժորժ Պուշի յայտարարութիւնը, մինչ պաղեստինցիք թերահաւատութեամբ ընդունեցին ամերիկացի նախագահին նախաձեռնութիւնը:

Սպիտակ Տան կողմէ հրապարակուած հակիրճ յայտարարութիւն

մը կը յայտնէր, որ պաղեստինցի վարչապետին նշանակումին լոյսին տակ Ուաշինկթըն գործադրութեան պիտի դնէ խաղաղութեան նամուր: Յայտարարութիւնը կը նշէր, որ ծրարը յոռաշիկայ շարքուան մէջ կրնայ վերականգնել: Աւելի ուշ, արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլը ըստ, որ Ուաշինկթըն պիտի հրաւիրուի պաղեստինցի նոր վարչապետի, անմիջապէս որ նշանակումը վաւերացւի ու ան ստանձնէ իր իշխանութիւնը:

Իսրայէլ, որ Ուաշինկթընի նման բարեկարգումներ կը պահանջէր պաղեստինցի իշխանութեան նախագահ Պաշտպանը, ողջունեց Պուշի յայտարարութիւնը: Վարչապետ Ա.

րիէլ Շարոնի խորհրդատու ըստ, որ Պուշ կ'ուզէ նշումը բանցնել պաղեստինցիներուն վրայ, որպէսզի լայն իրաւասութիւններ տան վարչապետին: Չալման Շովալ աւելցուց, որ Պուշ պաղեստինցիներուն կ'ուզէ ըսել, որ պետք է «մաքրեն» իրենց տունը՝ իշխանութիւն տալով վարչապետին:

Պաղեստինեան խորհրդարանը այսօրուան նիստին պիտի սահմանէ վարչապետին իրաւասութիւնները: Մշակուելիք օրինագիծը սակայն պետք է ստորագրուի Արաֆատի կողմէ, որպէսզի օրէնքի ուժ ունենայ: Կարգ մը մեկնաբաններու համաձայն, Արաֆատ կրնայ խորհրդարան վերադարձել օրինագիծը փոփոխութիւններ առաջարկելով:

Շար.ը՝ էջ 2

ԻՐԱՆ ԵՒ ՍՈՒՐԻԱ ԿԸ ՄԵՐԺԵՆ ԻՐԱՔԻ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸ



Նախագահներ՝ Խաթեմի եւ Ասատ՝ խորհրդակցութեան ընթացքին

Սուրիոյ նախագահ Պաշտպան Ասատ երէկ անակնկալ այցելութիւն մը տուաւ Իրան, խորհրդակցելու համար Իրաքի ստորնապին մասին: «Իր-ՆԱ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ասատ տեսակցութիւն մը

ունեցաւ նախագահ Մոհամէտ խաթեմիի հետ:

«Իր-ՆԱ» աւելցուց, որ երկու ղեկավարները կողմնակցեցին ամերիկացի ղեկավարներուն՝ լսելու համաշխարհային հանրապետական ղեկավար յայտարարելու անվտանգութեան փոխարէն:

նեյու տրամաբանութեան եւ խաղաղութեան լեզուով:

Թեհրանի մէջ, Ասատ տեսակցութիւն ունեցաւ նաեւ Իրանի գերագոյն ղեկավար յայտարար Ալի խաթեմէիի հետ:

ՖՐԱՆՍԱԽՕՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՄՕՏ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ Պապատյանի մեջ շարքավերջին ընդունեց Ֆրանսախօս երկիրներու Կապակերպութեան մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարարներու 29րդ վեհաժողովին մասնակից պատուիրակութիւններու նախագահները, ընկերակցութեամբ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուի Յովնանեանի, ինչպէս նաեւ մշակութի նախարար Ղասսան Սալամի:

Հանդիպումին, նախագահ Լահուտ նկատել տուաւ, որ Լիբանանի կողմէ 2009ի ֆրանսախօս երկիրներու խաղերու հիւրընկալումը փաստ մըն է Լիբանանի նկատմամբ գոյութիւն ունեցող միջազգային վստահութեան:

ԺՈՄՊԼԱԹ ԱՅՅԵԼԵՑ ԲՈՐԱՅԹԷՍ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ երեկոյեան Քորայթի մէջ ընդունեց Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ռաֆիտ Ժոմպլաթը եւ անոր հետ քննարկեց երկրին եւ շրջանային վերջին իրադարձութիւնները: Ժոմպլաթի կ'ընկերակցէին նախարարներ Մարուան Համատէ եւ Ղապի Արիտի:

ՊԱՍԷՄ ՍԱՊԱԱ ՎԵՐ Կ'ԱՌՆԷ ՊՔԵՐՔԷԻ ԴԵՐԸ

Երեսփոխան Պասէմ Սապաա շարքավերջին կապարուած հարցազրոյցի մը մէջ շեշտեց, որ հանրապետութեան նախագահին դիրքը այնպիսին է, որ բոլորին միջեւ հաւասարութիւն կը տարպարէ:

Անդրադառնալով շրջանին սոցալեան ցոյցերը, Սապաա դիմելով փոքր, որ Պրերքէ հիմնական դեր ունի այս վարակին «դիմադրութեան» աշխարհընկեր մէջ: Սապաան կատարելով փոքր, որ Պրերքէի այս կեցուածքը դրսեւորում է մարտնի եռյակային հարաբերութիւններու խորհուրդի ժողովին հրատարակած հաղորդագրութեամբ, որ զօրակցութիւն կը յայտնէր Սուրիոյ նախագահ Պաշար Ասափի յայտարարած կեցուածքին:

Սապաա նշեց նաեւ, որ նախագահ Կոր. Էմիլ Լահուտ բազմիցս յայտնած է եւ շեշտեց, որ Պապատյանի դռները բաց են բոլորին առջեւ, առանց խտրութեան: «Սակայն նախագահ Լահուտը ազգային երկխօսութեան իր կոչով կը հովանաւորէ այդ երկխօսութիւնը եւ ոչ թէ կը վարէ զայն», աւելցուց Սապաա:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԼՈՒՐԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆՅՈՅՑ
Ժամը 8:30 - Լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրներ՝ ԱՐԱԲԵՐԷՆ
Ժամը 9:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԷՆ
Ժամը 10:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԷՆ
Ժամը 11:30 - Լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրներ՝ ՀԱՅԵՐԷՆ
Ժամը 12:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԷՆ/ամփոփ
Ժամը 2:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԷՆ/ամփոփ
Ժամը 4:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԷՆ
Ժամը 6:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԷՆ

ՀՆՈՐՇԱԿԱԼԻՔ
●Տիկին Մարիամ Վարդանեան, տեր եւ տիկին տոքթ. Յովիկ Վարդանեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռաձայնով մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ հոր՝ ՄԱՆՈՒԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ մահուան սուգին:
«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
●Ժամը 8:00 Եկեք Խնդանք
●Ժամը 8:45 Աստղեր
●Ժամը 10:05 Մարեն Չորեն
●Ժամը 12:00 «Մարտի պահենք հայերնը» Շահանդուխտ
●Ժամը 3:00 Արաբերէն յայտագիր. Կարգադրոյց՝ Սիւզի Խանժիի հետ մայրերու օրուան առիթով՝ «Սիտրոզ» միութեան կազմակերպած կարկանդակի մրցանքին մասին
●Ժամը 4:00 Զարթոյց 1 ժամուան մէջ
●Ժամը 5:00 Գուսան
●Ժամը 7:30 Եկեք Խնդանք (կրկնք.)

ՖՐԱՆՍԱԽՕՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՇԱՐՅԵՐՈՒ 29ՐԴ ՎԵՒԱԺՈՂՈՎԸ ՓԱԿՈՒԵՑԱՒ

Ֆրանսախօս երկիրներու կապակերպութեան անդամ երկիրներու երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարները երէկ աւարտեցին իրենց 29րդ վեհաժողովը, որ սկսած էր անցեալ Ուրբաթ օր՝ «Մէթրոփոլիթըն» պանդոկին մէջ:
Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուի Յովնանեան շեշտեց, որ Լիբանանի յաջողեցաւ խորհրդաժողովը լաւապէս հիւրընկալել եւ աւելցուց, որ պիտի յաջողի հիւրընկալել նաեւ ֆրանսախօս երկիրներու 2. խաղերը, 2009ին, որուն իրաւունքը ստացաւ պաշտօնապէս:

Խորհրդաժողովը պատրաստեց նաեւ 2003, 2004 եւ 2005ի աշխատանքային ծրագիրը:
39 երկիրներու մասնակցութեամբ խորհրդաժողովին որոշուեցաւ, որ 30րդ խորհրդաժողովը պիտի կայանայ Ֆրանսայի մէջ, 2005ին:
Խորհրդաժողովի պաշտօնական փակումէն ետք նախարար Յովնանեան տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին անդրադարձաւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան մարզերուն գծով որոշուած պանազան աշխատանքներուն եւ գործադրուելիք յառաջիկայ ծրագիրներուն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանացիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ երէկ հետեւելէ ետք Փողոսկրեայ Ափունքի լիբանանեան համայնքին իրավիճակին, շեշտեց, թէ համայնքը կը գտնուի լաւ կացութեան մէջ, հակառակ երկրին մէջ արձանագրուած վերջին պարագայուններուն:
●ՄԱՐՈՒՆԵՐՈՒ Նաւարիլ, Պուրոտ Սֆէյր պատրիարքը Կիրակի օրուան իր քարոզչին մէջ մաղթեց, որ Աստուած շրջանը հետոյ պահէ պատերազմէ մը եւ Լիբանանը մնայ պաշտ ու անկախ:
Սֆէյր պատրիարք յոյս յայտնեց նաեւ, որ երկրին տնտեսական տագնապը աւելի եւս վատթարացում չարձանագրէ շրջանային վտանգին եւ յարուած կացութեան հետեւանքով:

●ԵՐԵՍՓՈՒՍՆ Մոհամետ Եահիա իբրեւ պատասխան Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի կատարած մեկնաբանութիւններուն՝ Լիբանան - Սուրիա յարաբերութեան գծով, ըսաւ, որ լիբանանեան սուրիական յարաբերութիւնները եղբայրական ու պատմական են, որոնց ոչ մէկը կրնայ սպառնալ:
●ՊԵՔԱՍՅԻ երեսփոխանները, քաղաքապետներն ու թաղապետները երէկ կոչուեցին կատարելու իր պարտականութիւնը՝ իստուցելու շրջանի բնակիչները, որպէսզի անոնք կարենան վերականգնել Լիբանանը հարուածած փոթորիկին պատճառած վնասներէն:
●ԵՐԵՍՓՈՒՍՆ Ալի

Պեպի անցեալ շաբաթավերջին կատարած իր յայտարարութիւններուն մէջ շեշտեց ներքին միասնականութեան անհրաժեշտութիւնը, հիմք նկատելով Լիբանան - Սուրիա որդեգրուած ռազմավարութիւնը:
●ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, նախկին վարչապետ Սելիմ Հըս, Օմար Բարամէ, երեսփոխաններ Նայլա Մուսուատ, Պուրոտ Հարպ, Էլիաս Աքաֆ, Ռուսամ Սաատ, նախկին երեսփոխան Նաժահ Ռաքիմ եւ Բարլոս Էտտէ այսօր «Պրիսթոլ» պանդոկին մէջ պիտի գումարեն ժողով մը, որուն ընթացքին «Պրիսթոլ» պիտի որոշուին կենտրոնական եւ շրջանային վարչապետները, անոնց մասին հրապարակելով հաղորդագրութիւն մը:

●ՇԻՒՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւսօրեայ շէյխ Ապտէլ Էմիր Բապայան շեշտեց, Լիբանանի մէջ ազգային միասնականութեան անհրաժեշտութիւնը, դիտել տալով, որ կողմնակի վէճերը կամ թիրիմացութիւնները կը խախտեն խաղաղութեան ար-

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
●Իրենց հոր՝ Մանուկ Վարդանեանի մահուան առիթով, տեր եւ տիկին տոքթ. Յովիկ Վարդանեան կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները.
Հ.Ե.Կ. Կերպարանական Վարչութեան 100,000 Լ. Ն.
Չերանցիկ Կերպարանական 100,000 Լ. Ն.
Թոնցիկ Կերպարանական 100,000 Լ. Ն.
Սերանցիկ 100,000 Լ. Ն.
Չարթոնցիկ 50,000 Լ. Ն.
Արարատ օրաթերթին 50,000 Լ. Ն.

●Երբին Թնճուկեանի մահուան Ա. տարելիցին առիթով, պրն. Կիրակոս Թնճուկեան կը կատարէ հետեւեալ նուիրատուութիւնները.
ԼՕՒԻ «Ա. Պուլլուրճեան» ընկերաբաժնեկական կերպարանին՝ 200 տոլար
Սերանցիկ 100 տոլար
Չարթոնցիկ 100 տոլար
(Ստանալու համար հեռաձայնել՝ 262118 թիւին):

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆԵՏԻՆ
●Իրենց հոր՝ Մանուկ Վարդանեանի մահուան առիթով, Տեր եւ տիկին տոքթ. Յովիկ Վարդանեան 50,000 Լ. Ն.

ԵՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է
ՌԱԶՄԻԿ
ԲԱԶՄԻԿ
Հ.Յ.Դ. Լ.Ե.Ս.Ի ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
Թիւ 26-28 Դեկտեմբեր 2002 - Փետրուար 2003

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՅՆՆԵՐԸ
«Պ. ՍԵՒՎԿ» ՄԱՍՆԱԳԵՏԻՎԻ «ԼՈՒՍՍԵՐՉԱԿ 40» ԹԱՏԵՐԱԿՈՒՄԸ
Հովանաւորութեամբ՝
Ը. Ը. ԴԵՍՊԱՆ ԱՐԵԳ ՅՈՎԿԱՆՆԻՍԵԱՆԻ
Կը ցերեկայացնէ՝
ԱԼԵՆԱՆՏՐՕ ՔԱՍՈՆԱՅԻ
«ԾԱՌԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԿԸ ՄԱՀԱՆԱՆ»
Թատերախաղը 2 արարով
Բեմադրութեամբ՝ **ՌՈՊԵՐԹ ԱՆԱԲԵԼԵԱՆԻ**
Մասնակցութեամբ՝ Հայրենի մեծահամբաւ դերասանուհի՝
ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆԻ
●Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 14 Մարտ 2003, աշակերտական, կեսօրէ ետք ժամը 5:00ին, Շաբաթ 15 եւ Կիրակի 16 Մարտ 2003 երեկոյեան ժամը 8:30ին, Այնճարի «Շեռլիկ» սրահին մէջ: Սակ՝ 10,000 Լ. Ն.:
●Պէյրութի մէջ՝ Ուրբաթ, 21 Մարտ 2003, աշակերտական, կեսօրէ ետք ժամը 4:30ին, սակ՝ 5000 Լ. Ն., Շաբաթ 22 եւ Կիրակի 23 Մարտ 2003 երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ: Սակ՝ 10,000 Լ. Ն.:

ՀՆՈՐՇԱԿՈՐԱԳԻՐ
Ձերդ Վեճմուծիւն,
Պարոն Ռոպէրթ Քոչարեան
Նորընտիր նախագահ
Հայաստանի Հանրապետութեան:
Հ. Մ. Ը. Մ. Ի Կեդրոնական Վարչութիւնը, Միութեան աշխարհատարած բոլոր Երջանային, Մեկուսի եւ մասնաճիւղային վարչութիւններու եւ քսանհինգ հազար անդամներու անունով, կու գայ իր արտագին բարեմաղթութիւնները ներկայացնելու ձեզի Հայաստանի Հանրապետութեան նախագահական աթոռին ձեր վերընտրութեան առիթով:
Անցեալ հնգամեակին ընթացքին մենք բազմաթիւ անգամներ ձեր անվերապահ խնամքին արժանացանք երիտասարդական մեր կապակերպութեան սկստական քաժինի հանդէպ ձեր ցուցաբերած բարակերպութեամբ:
Մեր արտագին մաղթանքն է, պարոն նախագահ, որ հայ ժողովուրդը հայրենիքի եւ Սփիւռքի իր թերեւով ձեր առաջնորդութեամբ նորարար նուաճումներ արձանագրէ ի փառս հայ ժողովուրդի եւ յաւերժական հայրենիքի բարօրութեան եւ արդար իրաւունքներու միջազգային ճանաչման:
Հ. Մ. Ը. Մ. Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԹԵԼ ԱԻԻ ԿՈՂՁՈՒՆԷ...
Շարունակուած Ա. ԷջԸ
Պուշի յայտարարութիւնը չխանգարուեց պաշտօնակցիները, որոնք գաղջ ընդունելութիւն մը տուին: Արաֆաթի խորհրդառու նապի Ապու Ռուսայնա բաւ, որ Պուշի յայտարարութեան ծրագրի զործադրութեան մասին:
Պուշի յայտարարութիւնը ողջունուեցաւ երազական Միութեան կողմէ, որ դրական նկատեց խաղաղութեան գործընթացը վերականգնելու որոշումը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ»
Գ. ՀԱՏՈՐԸ
Եղիմակ՝ **ԲԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆ**
Ստանալու համար դիմել Համազգայինի գրախանութ, «Ճաղգոյեան» կեդրոն, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, հեռ. 01-248043 եւ հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01-260924 եւ 04-714049:
Գին՝ 20 ամ. տոլար
ԾԱՆՕԹ. Ա., Բ. եւ Գ. հատորները միասնաբար 50 տոլար:

ՏՈՔԹ. ԹՈՎՄԱՍ ՅԱԿՈԲԵԱՆ
(Մասնագետ ոսկորի, մկանցի եւ ջիղերու)
Յարգոյ հիւանդները կ'ընդունին իր նոր դարմանատան մէջ, Տորա, Medical Center, Փոլիքլինիք, «Աբիլ» հաստ. վրայ, Յրդ յարկ, պլոք B, հեռ. 01-245151 եւ 03-956973:

ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ
2003 թուականը Ազգային վարժարաններու տարի յայտարարող Ազգ. Իշխանութեանց հրատեղի ընդառաջելով, հայ վարժարանի հոգեւոր եւ հարցերով մտաւոր լիբանանահայ գեղանկարչուհի տիկ. Լիւսի Թիւրքմենեան դիմեց գործնական քայլի՝ իր վերջին ցուցահանդէսին հասոյթէ բաժնի համելով վեց Ազգային վարժարաններու:
Ազգ. Եղիլէ Մանուկեան երկրորդական վարժարանի, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քուէճի, Սուպրեան - Խրիմեան միջնակարգի եւ Ս. Զառանցիկ Մանուկեան, Արգարեան եւ Աքոր Գասարեան միակարգարաններուն 1000ական ամերիկեան տոլար նուիրելով տիկ. Լիւսի Թիւրքմենեան անգամ մը եւս հաստատեց, որ միշտ անբաժան եղած է կապը հայ դպրոցին եւ անոր ներկայով ու ապագայով շահագրգիռ հայ արուեստագետին:
Շնորհակալութիւն՝ հայ դպրոցի ազնուասիրտ բարեկամ վաւերական արուեստագիտուհիին:
ՌՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԻ

ԿԸ ՆՈՒԻՐԸ
Լիբանանահայ գեղանկարչուհի տիկ. Լիւսի Թիւրքմենեան իր վերջին ցուցահանդէսին հասոյթը կը նուիրէ՝
Ազգային Ս. Զառանցիկ Մանուկեան վարժարանին 1000 տոլար
Ազգային Եղիլէ Մանուկեան քուէճին 1000 տոլար
Ազգային Արգարեան վարժարանին 1000 տոլար
Ազգային Լեւոն եւ Ս. Յակոբեան վարժարանին 1000 տոլար
Ազգային Ա. Գասարեան վարժարանին 1000 տոլար
Ազգային Սուպրեան - Խրիմեան վարժարանին (Թրիփոլի) 1000 տոլար
Հայ Աւետարանական քուէճ (Պէյրութ) 1000 տոլար
Հայ Աւետարանական Շամլեան - Թաթիկեան վարժարանին 1000 տոլար
Հայ Աւետարանական միակարգարանին (Թրատ) 1000 տոլար
«Ազգակ» օրաթերթին 500 տոլար
«Չարթոնց» օրաթերթին 500 տոլար
Ստանալ թիւրքմենեան հաստատութենէն, Անթիլիաս, հեռաձայն՝ 04-711967:

ՀԱԼԵՊԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՍԱՐԳԱՐԱՊԱՏ» ՊԱՐԱԽՈՒՄԻ ԵԼՈՅԹՆԵՐԸ



Սփյուռքեան գաղութներու միջեւ մշակութային գործակցութեան ծիրէն ներս, Համազգայինի Լիբանանի ճրջանային վարչութեան հրահանգով անցնող շաբաթավերջին Պէյրութի մէջ էլոյթ ունեցաւ Հալէպի Համազգայինի Ն. Աղբալեան մասնաճիւղի «Սարգարապատ» պարահումբը: Համազգայինի Լիբանանի պարարտեստի միաւորի վարչութեան կազմակերպած այս փոյգ էլոյթները տեղի ունեցան Շաբաթ, 15 եւ Կիրակի, 16 Մարտի երեկոյեան ժամը 8:30ին, «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

Նախքան էլոյթը, բացման խօսքով հանդէս եկաւ Սեդա Խորշեան, որ շեշտելէ ետք գաղութներու միջեւ հայկական մշակութային կապեր ստեղծելու Համազգայինի նպատակը, բարի գալուստ մաղթեց «Սարգարապատ» պարահումբին: Ան նաեւ ներկայացուց պարահումբին պատմականին ու գործունէութեան մասին տուեալներ եւ յաջողութիւն մաղթեց խումբին: Ապա բեմ բարձրացան Համազգայինի «Սարգարապատ» պարահումբի յանձնախումբի ատենապետ Համբիկ Սարգիսեան եւ Համազգայինի «Քնար» պարահումբի ու «Գայիանէ» պարի դպրոցի վարչութեան ներկայացուցիչ Պետիկ Ծառուկեան: Տեղի ունեցաւ Համազգայինի Լիբանանի պարարտեստի միաւորի կողմէ Հալէպի «Սարգարապատ» պարահումբի յուշանուէրի յանձնումը:

Պարուսոյց Յովհաննէս Խաչիկեանի ղեկավարութեամբ «Սարգարապատ» պարահումբը ներկայացուց երկու բաժինէ բաղկացած ճոխ յայտագիր մը, որուն առաջին մասը նուիրուած էր Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակին:

Արամ Խաչատուրեանի երաժշտութեան կշռոյթներով, «Սարգարապատ»-ի տղաքն ու աղջիկները մատուցեցին «Մուտք պար», «Շալախ», «Վարդագոյն աղջիկներ», «Լեզկիկա», «Ուլուն տարա», «Սուրբով պար» եւ «Գարուն Լիւնան» պարերը:

Յայտագիրին երկրորդ բաժինը յատկացուած էր ժողովրդական-ազգագրական պարերու: Այս բաժինով ներկայացուցան «Քաջ Նապար» կատակ պար - բեմականացումը, ինչպէս նաեւ «Արարական», «Հովիտի երապ», «Զէյթունցիներ», «Հայրուհի» եւ «Արցախ» պարերը: Ելոյթը նաեւ կ'ընդգրկէր հայերէն ու արաբերէն մենթրեր:

Աւելի քան երեք տասնեակ պարողները ներդաշնակութեամբ ու համաչափ շարժումներով յերկայացուցին իրենց աշխատանքը, պարին միջոցով մշակութային կամուրջ մը ձգելով երկու գաղութներուն միջեւ:

ՀԵՆՈՄ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ «ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ԸԱՄԱՅՆԵՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ» ՆԻԹՈՎ


Շաբաթ, 15 Մարտի երեկոյեան ժամը 18:30ին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՆՈՄ) Անթիլիասի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ միութեան շաբաթական եւ հերթական հանդիպում - դասախօսութիւնը, որուն նիւթն էր «Լիբանանահայ համայնքին իրաւունքները»:

Օրուան դասախօսը՝ Յակոբ Բագրատունի, իր դասախօսութեան նախաբանին մէջ անդրադարձաւ այն երեւոյթին, թէ ինչո՞ւ ընդհանրապէս կը խօսինք լիբանանահայութեան իրաւունքներուն, եւ ոչ օրինակ՝ ամերիկահայութեան կամ քանատահայութեան իրաւունքներուն մասին: Մենք կը խօսինք լիբանանահայութեան իրաւունքներուն մասին, որովհետեւ Լիբանան տակաւին կը ղեկավարուի համայնքային դրութեամբ, իսկ ի տարբերութիւն աշխարհի բազմաթիւ ժողովրդավարական երկիրներու վարչակարգերուն, Լիբանանի մէջ գոյութիւն ունի «համախոհական ժողովրդավարութիւն» հասկացողութիւնը, որ կ'ենթադրէ Լիբանանը ներկայացնող համայնքային ընտանիքներու համախոհութեան եւ համաձայնութեան միջոցով երկրի ղեկավարում:

Այնուհետեւ, Յակոբ Բագրատունի պատմական ակնարկ մը նետեց Լիբանանի օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններուն մէջ հայ համայնքի իրաւունքներուն մասին՝ Մեծն Լիբանանի հոշակուէն մինչեւ Թաէֆի համաձայնագիր:

Թաէֆի համաձայնագիրով նոր հանգրուան մը կը սկսի լիբանանահայ համայնքի իրաւունքներուն ամրագրման իմաստով: Այդ օրէնսդիր, լիբանանահայ համայնքը կը նկատուի Լիբանանը բաղկացնող եօթը գլխավոր համայնքներէն մէկը: Այս իմաստով ալ, Լիբանանի քաղաքացիական պատերազմի աւարտէն ետք ձգուեցան լիբանանահայութեան իրաւունքները Լիբանանի օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններուն մէջ: Իրերայաջորդ կառավարութիւններու նշանակման ընթացքին գոյութիւն ունեցած է սկզբունք մը. 14 աթոռներէ բաղկացած դահլիճի մը մէջ կը նշանակուի մէկ հայ նախարար, իսկ 18 աթոռ հաշուող դահլիճի մը մէջ կը նշանակուի 2 հայ նախարար: Այս սկզբունքը խախտեցաւ կառավարական վերջին դահլիճի նշանակման ընթացքին. 30 հոգիանոց կառավարութեան մէջ նշանակուեցաւ միայն մէկ հայ նախարար, եւ այս իմաստով ալ, լիբանանահայ համայնքը պահանջատէր կը մնայ իր իրաւունքին:

Յակոբ Բագրատունի թիւերով անդրադարձաւ նաեւ պետական վարչամեքենային մէջ լիբանանահայութեան ունեցած իրաւունքներուն, եւ յայտնեց, որ այդ մարզին մէջ եւս համայնքային իրաւունքները չեն յարգուի: Երակացնելով, Յակոբ Բագրատունի շեշտեց, որ լիբանանահայ երիտասարդն ու ուսանողը պէտք է գիտակից ըլլան իրենց իրաւունքներուն, եւ համապատասխան պատրաստութիւնը ունենան այդ իրաւունքները ձեռք բերելու համար:



15 Մարտի տեղական մամուլը լուսարձակիտակառած է Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքի դէմ սահմանուող պատերազմը, որ ըստ թերթերուն՝ սկսած է անխուսափելի դառնալ, պաղտութեան բռնաբարութիւն շրջաններուն մէջ շարունակուող ջարդեր եւ լիբանանեան քաղաքական ներքին կենթը յուլող պատերազմի հարցեր:

«Նահար» գրած է, թէ Պաղտատ խոստացաւ «ջիղեր քանդող» կազմերուն մասին տեղեկագիր մը ներկայացնել ՄԱԿի: Իրաքի տազնապին պատճառով տարբեր կէցածքներու առկայութիւնը կ'անդամալուծէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը: 16 Մարտին կայանալիք Ալուրի վեհաժողովը վճռորոշ դեր կը խաղայ խաղաղութեան եւ պատերազմին միջեւ, նշած է օրաթերթը:

«Մուսթաքալ»-ի համաձայն, «Խաղաղութեան քարտէս»ը կ'ուղղուի դէպի Պաղտատ: Համախոհութեան առաջարկները ծախսողին եւ իրաքը կը մերժէ պզուցման որեւէ կոչ: Պատերազմին նուիրուած վեհաժողովը պիտի կայանայ 16 Մարտին՝ Պուշի, Պէրի եւ Ասնարի միջեւ, նշած է թերթը: «Տիար» գրած է, թէ ամերիկեան աղբիւրներ դիտել կու տան, որ Իրաքի դէմ պատերազմը պիտի սկսի յառաջիկայ շաբաթ: Ուաշինթոնի պատերազմի որոշումը Իսրայէլի պիտի փոխանցէ անոր սկսելէն վեց ժամ առաջ, իսկ Եգիպտոսի՝ երկու ժամ առաջ:

Ըստ թերթին, Իրաքեան պատերազմը դէպի փակուողի մուտք մը պիտի ըլլայ եւ շրջանը պիտի միւրձէ Իրաքի յային վիճակի մը մէջ:

«Լիուս» լուսարձակի տակ առած է Պուշի - Ասնար ետեալ կին 16 Մարտի հանդիպումը Փորթուպի մէջ: Ըստ թերթին, պատերազմի որոշումը կը խորացնէ միջազգային երկփեղկումը: Մուսթաքալի Արաբիոյ արտաքին գործոց նախարարը ցաւ յայտնեց ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ ստեղծուած տարակարծութեան համար եւ յայտնեց, որ մեծ փորձանքներ կը սպասեն Իրաքը գրաւողին:

«Եռակողմանի վեհաժողովը պատերազմը պիտի արագացնէ կամ պիտի յետաձգէ. Ուաշինթոնը կը մերժէ 17 Մարտի պայմանագրի երկարաձգումը», գրած է «Պայրաք» օրաթերթը:

Ըստ «Քիֆաի Արապի»-ի, Թուրքիոյ մերժումէն ետք Մեռուտական Արաբիա իր օդային սահմանները կը բանայ ամերիկեան իրթիներուն դիմաց: ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը երկփեղկում կը դիմացաւ, իսկ պատերազմը դրոները կը թակէ: «Սաֆիր» գրած է, թէ դիւանագիտական աշխատանքները հոն գեղարք կ'ապրին, իսկ Միացեալ Նահանգները դժգոհ են «փոքրերուն» գլուխ բարձրացնելէն: «Պատերազմի վեհաժողովը» պիտի կայանայ 16 Մարտին:

«Մուսթաքալ» նշած է, թէ վեհաժողովը եւ ամերիկեան ու բրիտանական համախումբները կը նախորդեն պատերազմին: Իրաքի դէմ ամերիկեան պատերազմը կը տատանի որոշումի գործադրութեան եւ թուականի ճշգրիտ որոշման միջեւ, գրած է թերթը:

«Տէլի Սթար»-ի համաձայն, Պուշի յայտարարած է, թէ ժամանակը հասած է գործնական եւ վճռորոշ քայլեր առնելու:

Պաղտատի նաեւ տազնապին գծով Պուշի կատարած վերջին նախաձեռնութեան մասին «Լիուս» գրած է, թէ Պուշի եւ Փաւլը կը խոստանան հիմնել պաղտատի նաեւ պետութիւն մը: Ըստ թերթին, խաղաղութեան քարտէսի ծրագիրին օրինագիծը կողմերու ղեկավարներուն սեփականութիւնը պիտի դառնայ Ապու Մապէնի վարչապետութեան պաշտօնը ստանձնելէն ետք:

«Պայրաք»-ի համաձայն, Պուշի խաղաղութեան գործընթացը կը կապէ պաղտատի նոյն վարչապետութիւնը: Ամերիկեան անակնկալ նախաձեռնութիւն՝ Միջին Արեւելքի տազնապին լուծման վերաբերեալ:

«Անտեսելով Իրաքի դէմ իր թշնամութիւնը՝ Պուշի յանկարծ կը սկսի թափ տալ խաղաղութեան քարտէսին՝ Ապու Մապէնի գործնական իրաւունքներուն շնորհովը նախապայման նկատելով», նշած է «Քիֆաի Արապի»:

Ըստ «Տիար»-ի, 12 ժամուան ընթացքին Ժենիւնի եւ Թամունի մէջ 11 պաղտատի ներ նախատակուեցան: Պաղտատի նաեւ իշխանութիւնը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդէն կը պահանջէ պատժել Իսրայէլը:

«Մուսթաքալ»-ի համաձայն, Պուշի ապրիլ եւ գործնական իրաւաստութիւններ կը սպասեն Իրաքը գրաւողին:

«Անուար» գրած է, թէ խաղաղութեան քարտէսին առնչութեամբ Պուշի կէցածքը կ'արժանանայ իսրայէլեան պօրակցութեան, իսկ պաղտատի նաեւ կասկածին:

«Նահար»-ի համաձայն, Ժենիւնի եւ Թամունի մէջ 10 պաղտատի նախատակուեցան, իսկ վարչապետ Ապու Մապէն Ուաշինթոնը կը հրաւիրուի «յարմար ժամանակին»: Պուշի իր ճառին մէջ վերադառնալ երեւոյթի հանց «խաղաղութեան քարտէսը», մէկդի ձգելով Իրաքի հարցը:

Լիբանանեան լուրերու կարգին «Տիար» գրած է, թէ նախագահ Լահուտ գոհ է ներքին կացութենէն եւ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ տնտեսութիւնը բարելաւելու կարելիութիւններուն նկատմամբ: Հարիւրի կը յայտարարէ. «Մեր ներքին իրավիճակին բարելաւումը կ'երաշխաւորուի Սուրիոյ հետ հարցերու համակարգումով»:

Նասրալլա կ'արժեւորէ քրիստոնեայ եկեղեցւոյ կեցումը, նշած է թերթը: Ըստ «Լիուս»-ի, ելեկտրականութեան թղթածրարը պիտի չարժարժուի Երեքշաբթի, իսկ ընկերութեան ապապետականացման հարցը կը հատուենայ: Միջազգային այլ լուրերու կարգին, թերթը անդրադարձած է թուրքիոյ մէջ երկրին օդային սահմանները բանալու հարցին՝ ամերիկեան ճնշումներուն ներքեւ, ինչպէս նաեւ Էրտոգանի յայտարարութեան անդամներուն անուններուն եւ արտաքին գործոց նախարարութիւնը կ'իլով վերապահելուն գծով: Անոնք նաեւ լուսարձակի տակ առած են Սերպիոյ բարեկարգչական վարչապետ Ճիւճիչի ահաբեկումը: Իրենց ներքին էջերով թերթերը լուսարձակի տակ առած են նախկին երեսփոխան տոքթ. Անդրանիկ Մանուկեանի յուղարկուողութեան արարողութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐՈՒ ԻՆՔՆԱՏԻՊ ՅՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Հայկական տարագներու ուշագրաւ գոյգ ցուցադրութիւններ տեղի ունեցան 9 եւ 16 Մարտին: Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը. «Անդրանիկ» մշակութային միութեան կազմակերպած այս ցուցադրութեան, Կիրակի, 16 Մարտի «Ելոյթը» տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 6:00ին, «Լը Մերիտի» թատրոնը պանդոկին մէջ: Յուրադրութեան ընթացքին ներկայացուցան քանի մը տասնեակ հայկական ազգագրական տարագներ, որոնք գործն են Լուսին Սամուէլեանի: Այս ծեռնարկը իրագործուած էր Հալէպի Գերմանիկ - Վասպուրական տիկնանց վարչութեան գործակցութեամբ:

Ճարկներու կարեւորութիւնը: Ան նաեւ զնահատանըրով անդրադարձաւ հայկական տարագները ուսումնասիրելու եւ գանձող կարելի հարակատրութեամբ վերականգնողանցնելու Լուսին Սամուէլեանի երախտաշատ աշխատանքին:



Անգլերէն բացատրութիւն: Երախտաշատ ու մեր ժողովուրդին պատիւ բերող այս նախաձեռնութիւնը ողջունելի է ամենեւին. յատկապէս այն օրերուն, երբ ազգովին կարիքն ունենք մշակութային լիցքաւորման: Բժախնդրութեամբ եւ ամենայն լրջութեամբ պատրաստուած այս ցուցադրութիւնը իրաւամբ հպարտութիւն կ'առնէ իւրաքանչիւր հայ մարդու, որ կ'ապրի ու կը շնչէ մեր հարուստ ու ինքնուրոյն մշակութային լիցքաւորման:

Ապա խօսք առաւ Լուսին Սամուէլեան, որ ներկայացնելէ ետք հայկական տարագները ուսումնասիրող պարիւրները եւ ժողովրդական մշակութային մէջ հայկական տարագներուն ներկայացուցած ազգագրական կարեւորութիւնը, որ Լուսին Սամուէլեան, «Կը հաւատարմութեամբ, թէ հայկական տարագները հայնոր սերունդին եւ ժախարհին ցուցադրելու պարտքը մըն է, մանաւանդ երբ բշտամին այսօր կը փորձէ իւրացնել մանկ մեր մշակութային տարբեր արտայայտութիւնները»: Հայկական տարագներու այս հատման մէջ մանկ ծեռնարկները, ծեռնարկին բացման խօսքը արտասանեց Արմէն Իւրանլեան, որ վեր առաւ հայ մշակութային տարածման ու ծանօթացման մէջ մանկ ծեռնարկներու կարեւորութիւնը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ... ԲԱՅՑ

ՍՏՐՈՒՄԵՐ

... ՆԱԷԻ Պ. ՍՆԱՊԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Հիրանանաչ գրասէր Հասարակութիւնը արժանապէս շուքով մեծարեց իր երկու գաւազանները: «Բագին» գրական ամսագրի քառասուն ամեակ: Գրագէտ Պ. Սնապեանի քառասուն եւ աւելի յարատեւ տարիներու վաստակ:

Իրօք, Հեռու գրագրանքի գեղուցման, այլապէս պատշաճութեան, յարգանքի մատուցման, երախտագիտական ու անսեթեթ միջոցառումները մը ընթացքին նշուեցան գոյգ ՏԱՐԵՂԱՐՁՆԵՐԸ:

Տարօրինակ գուգորդութիւն՝ ներդաշնակ այս պատկերին դիմաց: Իրագործութիւններու աննպաստ հոսանքներու առընթեր, բախտակիր երկու իրակահաստութիւններ, չորս տասնամեակներ ամբողջ, զերար սնուցանող, իրարմով ապրող եւ կենսաւորող ՏԱՐԻՐԵՐ:

Սփիւռքեան Հոգեւորական պայմաններու դէմ թիափարելու մանաւանդ անխափան յարատեւելը ինքնին արժեքաւոր մշակութիւն ու համակարգ է, անտարակոյս: Ազգային ու մարդկային անկորնչելի արժէքափայլին կանչած, իրերարյալորդ տարեթիւերու թաւալումին գուգահեռ, հոգեկան թէ՛ իմացական արարչական բոցկրթումներու ուղեկիչ ըլլալու իրողութիւնը, յաւելեալ բնորոշումն են ԵՎՈՒՌՈՒՐԵԱԿ այս ծնունդներուն, որոնց ձգած եզակի դրոշմն ու մշտարթուն կշռոյթը դեռ երկար պիտի արձագանգեն համագրային գրական անդամներին մէջ:

Արդարեւ, յորեկանական հանդիսութեան օրուն բանախօսները հանգամանօրէն բնութագրեցին «Բագին» գրական ամսագրին մատուցած գեղարուեստական ներաշխարհի ծառայութիւնները, հոգեշահ, բիւրեղ երարձարահներ պայտուարիկներպելու նախնաձայնագրութիւնն ու ազգային մտածողութեան սպասարկելու աւանդը, եւ յատկապէս նորահաս երիտասարդ սերունդին կուտակելու ու մղելու ուժը հանդիսանալու պատրաստակամութիւնը: Միւս կողմէն, անոնք բառ էութեան ներկայացուցին գրագէտ, հրատարակչական հարմարեցումներ, գրագեանադէտ եւ երկարամեայ անխնայ խմբագիր Պ. Սնապեանը:

Յորեկեարը ունկնդրեց աւելին: Հանդիսութեան ընթացքին բառ արձանագրեց եւ արդարօրէն վեր առնուեցան գրագէտ Պ. Սնապեանի գրականագիտական հայեացքները, պերճ ու սիրուն լեզուն, խորաթափանց միտքը, խոսկալոյց ու փոթորիկոտ հոգին, յանդուգն եւ բարգաւաճող գրիչը, բառուկուտային եւ ստեղծելի խորութիւններէ ձերբազատ ուն ու անկաշկանդ երեւակայութիւնը: Այսուամենայնիւ, անոր՝ Պ. Սնապեանի, հայ գրականութեան անաղարտ պահպանման անգնահատելի նախնաձայնագրութիւնը, կորովն ու վճռակամութիւնը, բծախնդիր, անկաշու եւ անկեղծ աշխատելու ուժը, այլ խօսքով՝ գրական աշխարհի մէջ անոր ստեղծած եւ ներմուծած կենցաղը:

Ի դէպ, հանդիսութեան առթիւ հոգեկան ապրումները մեզ մղեցին դէպի տարբեր ոլորտներ եւ մտորումներ: Համաշխարհայնացման բացարձակապէս նիւթապաշտ ու ապագային անդունդը ապրող նորահաս սերունդին համար, վերոնշարձ արժէքային համակարգը, էպպէս իւրացնելու եւ ըմբռնելու մտասեւեռումը՝ հանապազօրեայ հոգետանջ վերիվայրումներ կը պատճառեն, անծոց հասկնալիութեան եւ բիւրեղացման համար յոյժ էակ ունեւոր վերապահեւած է առաջնորդ սերունդին ուսերուն:

Ըսենք, նաեւ Պ. Սնապեան ուսուցիչը: Խմբագրապետի իր բոլոր բարեմասնութիւններով հանդերձ, իր լիբերալ գնահատականները պիտի ըլլանք, թէ՛ իր թեք պահ մեր մտածողները չսեւեռենք անոր ուսուցիչի կերպարին վրայ:

Պ. Սնապեան ուսուցիչը, կրցաւ իրերարյալորդ սերունդները մը կը մտնայ յատկութեամբ մը, որուն հաւանարթմը մէջ միայն ցարկ: Ան սոսկեակ ուսումնով ուսուցիչի առաքելութեան հետ ու միատեղ փոխանցեց իր օժտեալ ներդաշնակ կապ ու խանդաղատանքը, հրավառ կիրքն ու ջերմութեամբ իր հայ գրականութեան նկատմամբ: Սիրով լեցուն հոգեբանչիւր աշակերտի սիրտը, բոցալուրդ բոլորին հոգիները՝ ընդերուգտելու Գ. Վարուժաններու թէ՛ Վ. Շուշանեաններու հետ: Իւրօրինակ հաղորդականութեամբ իր աշակերտներուն առջեւ բացաւ օջականեան բարդ եւ սակայն վեհազոր ուստաղաշտերու կենցաղագիտական անօրինակ գրգիռներով մեծարեց օժտեալ ու նուիրեալ բոլոր գրչերարյալները: Բաժնեկից եղաւ նախնակցի գերգոյնուն ու վեհափառ տեսիլներու մատուցման: Բնագրային եւ իրապաշտ իմացականութեամբ սիրելի եւ սիրեցնել տուաւ կանաչը իր բազմաչերտ վերիվայրումներով: Հոգեբեկեալ մարդկային պահիկներն անգամ ընդեզեց Պ. Սնապեանի եւ Ռ. Զարդարեաններու սիրագրել թովչանքներով: Իր շրջապատին՝ աշակերտութեան քարոզեց եւ իր կարգախօսը համարեց Նայ ցեղացի արքայն անունն իրատեղութիւնները գերազանց արժեքներն են իրենց բազմաբնոյթ երանգներով, իրաւ բանաստեղծի կողմէ արձակուած իւրաքանչիւր բառ, միտք թէ տեսիլք հոգեպարար թռիչքներ են կախարդական:

Աւելին՝ արեւմտահայ գրականութիւնը կենարար երակը համարեց Նայ գրականութեան, եւ ոգեղինացած մեծարեցեան հրաշափառ բանաստեղծութեան ինկարոյր արօթքներ համայն մարդկութեան:

Այսուամենայնիւ, ինչպէս չլիարակուի անոր ստեղծագործելու տեսիլն, խորհելու, խորասրտուցելու թելագործելու տեսիլն են հայ ազգի անբերտ արեան շարունակականութիւնը յաւերժացնելու անոր երկունքն: Թող այս տողերը երախտագիտութիւն եւ մշտանորդ յանձնառուութիւն պարգեւեն բոլորիս, եւ Ուսուցչաց տօնին առիթով՝ քեզ շնորհակալութեամբ պերճախօս վկայութիւն:

ՀԱՄԲԿ ՊԻԼԱԼԵԱՆ

Հայաստանի նախագահին եւ ժողովուրդին եւ համայն հայութեան սրտագին շնորհակատութիւններ, նախագահական ընտրութեանց առիթով: Նախագահ Ռ. Քոչարեանին վերաբերող թիւերը ցոյց տուաւ մեր հայրենի ժողովուրդին առողջ կեցուածքն ու արեւելումը եւ ճիշդ ընտրութիւնը:

Ամիսներու վրայ երկարած նախընտրական քարոզչութիւն, թեկնածուներու ընտրական շրջապատներ, անասուններու գեղուց, տեղի եւ գուռնա, շուրջպար եւ բարեմաղթութիւններ՝ վերջի վերջոյ պիտի յանգէին միակ թեկնածուի մը ընտրութեան, բնաւաւ արարեց: Հիմա անցած են այլեւս այդ ֆեթիլայները, ընտրութեան է նախագահ եւ ժամանակ է դորձի:

Երբ ժողովուրդը աւելի քան երկու երրորդի մեծամասնութեամբ կը կատարէ ճիշդ ընտրութիւն, սա կը նշանակէ, որ ան որոշ քաղաքական հասունութիւն նուաճած է արդէն, համեմատաբար կարճ շրջանի մը ընթացքին: Ժողովուրդավարութիւնն ալ դանդաղ աճող ծառ մըն է: Մեր մօտ, սակայն, բաւական արագ կան բաժանարար ըլլալ կը թուի:

Ընտրուած, աւելի ճիշդ վերընտրուած, նախագայր ժողովուրդին ներկայացած թեկնածուներուն մէջ ամէնէն արժանաւորն էր բնականա-

բար, այդ կառավարութիւնը չէ ուղացած իր եզրակացութիւնը յայտնելու հայաստանի ընտրութեան ընթացքին համար: Իրենք՝ ամերիկացիք, սովոր են ըսելու «տե՛ս, ո՞վ է խօսողը...»: Շնորհակալութիւն՝ իրենց: Կը ցաւիք իրենց հաշուոյն, որ ըստ երեւոյթին, ընտրեալ նախագահը Քոչարեանն էր... Այս նախընտրական ընդհանուր զլամաղախ մէջ, ինչպէս որ կը սիրեն ըսել մեր հայրենակիցները, պարզուեցան շատ ըմբռնելի եւ անըմբռնելի երեւոյթներ: Ամէն քարոզարու ընթացքին ամէնէն տկար թեկնածուիս կ'երագէ եւ կը յաւակնի ու կը յայտարարէ, որ ինք պիտի ըլլայ բնախաւորը: Ասիկա բնական երեւոյթ է կալային որքան ծիծաղելի կ'ըլլայ ձախողած թեկնածուի մը, երբ կը կատարուի հաշիւը քուէարկները, որ ստացած է քուէներուն մեծամասնութեանը, եւ ինք կը յամենայ պնդել, որ ստացած է քուէներուն մեծամասնութեանը, եւ թէ ինքն է ընտրեալ նախագահը: Մանաւանդ՝ երբ քուէարկութիւնը, հակառակ արձանագրուած թերութեանց, արդիւն է ազատ: Այսպիսի ծիծաղելի ծանուցումներ ջանալ կլլել տալ ժողովուրդին՝ խակութեան հսկայ ապացոյց է: Չ'արժեր, վնասակար եւ քաղաքացիական ղապսերը: Հարկ էր, որ



«ստաշինութիւն»ը բաւական զարգացած է հայրենիքին մէջ: Բայց, մարդ Աստուծոյ, երբ այնքան չկլլուելիք կոթողական սուտեր կը հնարուին, որ ինք, հնարիչը մէջտեղ կը մնայ տկար վիճակի մէջ: Սուտ ստեղծելն ալ իր չափն ու սահմանը ունի վստահաբար: Եւ տրուած ըլլալով, որ սուտին տպւտիկները միշտ կարճ եւ վտիտ են, վրաս հեծած ապետը վար կը գործի: Մեզ՝ հայերու համար նորարարութիւն էր հետեւեալ վրայ հարուստեան բանավէճը: Սա շնորհաւորելի քայլ է, որ բաւական չեմ ու չունէ ետք կրցանք վայելել: Մինչեւ վերին վայրկեան Ռեքսելսթրիկն աստուծուն կը յամառէր չնեկայանայ: Իսկ երբ ներկայացաւ, արար աշխարհին ցոյց տուաւ, որ դեռ լաւ չէ պատրաստած քաղաքական ու քաղաքացիական ղապսերը: Հարկ էր, որ

ԱՅՆՃԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՎՈՒՄՆԵՐ ՎԱՐԴՈՒՎՈՒՄՆԵՐ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆԻ ՀԵՏ

Ծանօթ է, որ հայրենի դերասանուհի Վարդուհի Վարդերեսեան, Համագրային Այնճարի «Պ. Սեւակ» մասնաճիւղի հրատարակիչ կը գտնուի Լիւնանը: «Լուսարձակ 40» թատերախումբը, բեմադրութեամբ Ռոպէրթ Առաքելեանի, նախաձեռնած է Ալեխանդրո Քաստանայի «Ծառեր կանաչուն կը մարահան» թատերախաղին բեմադրութեան, ուր մեծ մօր դերը ստանձնած է Վարդուհի Վարդերեսեան:



Մարտ 7ին, Այնճարի «Գ. Կիւլպէնկեան» սրահին մէջ դերասանուհին հանդիպում ունեցաւ հայաւանի երեք վարժարաններու աշակերտութեան հետ: Ազգային Գ. Կիւլպէնկեան վարժարանի ուսուցիչ Յովհաննէս Խօջեան հակիրճ գիծերու մէջ ներկայացուց մեծատաղանդ դերասանուհին: Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ Վարդուհի Վարդերեսեանը, որ պատմեց իր արեւստի մասին, արտասանեց Միամանթոյն եւ Պ. Սեւակին, կարճ պիւրութիւն մը տուաւ Ազգային Գ. Կիւլպէնկեան վարժարանի տնօրէնութեան: Նոյն երեկոյեան Հ. Յ. Գ. «Կարմիր Լեռ» կոմիտէի ղեկավարական մարմինը հանդիպում մը կազմակերպած էր «Մարգրիտ Զէյթեան» ժողովրդային տան մէջ:

Եսայի Հաւաթեանի բացման խօսքէն ետք բեմադրիչ Ռոպէրթ Առաքելեան ներկայացուց դերասանուհին: Տեսերիքով ցուցադրուեցաւ «Տեսուածներ» թատերախաղի կնիկը» եւ «Փոստալը» ներկայացուցումներէն յայնուհետեւ դերասանուհին ներկայացուց Ալետիս Ահարոնեանի «Հաղթան» Գառորդ ժամ տեւողութեամբ այս կտորը չափազանց տպաւորեց ներկայները, որոնք երկարատեւ ծափահարութիւններով զնահատեցին դերասանուհին:

Մարտ 8ին դերասանուհին հարցազրուեցաւ «Ազգային» օրաթերթին մը «Վանաչ Զայն»-ին, իսկ յաջորդ օրը ներկայ գտնուեցաւ «Բագին»ի քառասունամեակի տօնակատարութեան, Պէյրութի «Յ. Տէր Մեղրեան» թատերասրահին մէջ:

Մարտ 11ին դերասանուհին հանդիպում մը ունեցաւ Այնճարի Հ. Յ. Գ. «Կարմիր Լեռ» կոմիտէին հետ: ԼՕՆի «Աղթամար» մասնաճիւղի դաստիարակչական յանձնախումբը Մարտ 12ին կազմակերպած էր հանդիպում մը ընկերակցութեան հետ: Ներկայ էին մեծ թիւով համակիրներ: Ընկ. Ռիթմա Քիւլպէնկեանի բացման խօսքէն ետք հրաւիրուեցաւ Վարդուհի Վարդերեսեան, որ հակիրճ ձեւով ներկայացուց իր անցած ուղին, այնուհետեւ կատարեց հատուածներ «Պեղծ մը անունը սիրտն է», «Թաղական կնիկը»-ն, ասմունքեց Ա. Իսահակեանի «Կատարեցաւ ներկաներու հարցումներուն, որոնք չէին ստիպեց նուազ սիրելի դերասանուհին եւ խանդաբեր ստեղծուած ջերմ միջոցառումը:

Շարունակ հանդիպումներ, այցելութիւններ, իսկ երեկոյեան՝ ծանր փորձեր «Լուսարձակ 40» թատերախումբի հետ:

Վ. Վարդերեսեանին գլխաւոր հանդիպումը հասունութեան հետ կայացաւ Մարտ 14, 15, 16ին, Այնճարի «Հետեւիկ» սրահին մէջ, ուր ներկայացուեցաւ Ա. Քաստանայի «Մարտը կանաչուն կը մահանան» ներկայացումը, բեմադրութեամբ Ռոպէրթ Առաքելեանի, որ իրաւամբ թատերական իրադարձութիւն մըն էր մեր զաղութիւն մէջ:

Հայրենի մեծանուն դերասանուհին հանդիպումները տակաւին պիտի շարունակուին Պէյրութի մէջ, ուր դարձեալ ամէնէն նշանակալիցը կը կայանայ Մարտ 21, 22, 23ին, «Յ. Տէր Մեղրեան» թատերասրահին մէջ:

Կը սպասենք...

Շ. Յ. Գ. ՍԱՐԳՍԻԱՆՍ ԿՈՍԻՏԵԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԶԱՐԴՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՆԱԽԱԶՆՈՒԹԵԱՄԲ

ԴԱՍՏԱՍՈՒԹԻՒՆ-ՉՐՈՅՑ

Լիւր՝

«ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ»

- * Լ.Օ.ԽԱԶ
- * Երեսպիտակաւ կը Գրասենեակ
- * Ա.Յ.Զ.Ի.Լ.

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 19 Մարտ 2003, Երեկոյեան ժամը 8:00ին, Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի սրահին մէջ:

Աշակուբայրն է

ՀԵՆՐԻԿ ԳԱՐՈՒԿԵԱՆ. ԿՏԱՐՈՒՄ ԵՒ ԿՏԱՒԻՑ ԴՈՒՐՍ

Հայրենի գեղանկարչներու երիտասարդ սերունդի ծանօթ դեմքերէն է Հենրիկ Գարուկեանը: Ստորեւ կու տանք հակիրճ ակնարկ մը ամոր արուեստին մասին, բաղուած՝ «Հայեացք Երեւանից» ամսաթիւին:

ՅԱՆՈՒՆ ԲԱՐՉՐՈՐԱԿ ԵՒ ՈՒՐՈՅՆ ՄՇԱԿՈՅԹԻ

Եթէ երբեք այսօր Եւրոպան ձեռնարկուած ձեռքերով եւ խորքին վերադառնալու ճիգի մը մէջ է, ապա Միացեալ Նահանգներ ձեռնարկուած մէջ խրատ կը բուրհ ըլլալ:

Ձեռնարկուածները նախեւառաջ դիրքին եւ մատչելի միջոցներով արուեստի արագ ժողովրդականացում կ'ենթադրէ: Իսկ արուեստի արագ ժողովրդականացումը իր կարգին մակարդակի անկում կը նշանակէ: Արուեստը դիրքուածման եւ առանց մասնաւոր ճիգի ժողովուրդին սեփականութիւնը դարձնելու ձգտումը դրական եւ շինիչ երեւոյթ է, սակայն ի հաշիւ մակարդակի անկման եւ որակազրկման եղած արուեստի տարածումը ինքնին ժխտական անդրադարձ կ'ունենայ տուեալ հասարականութեան մշակութային որակին վրայ:

Դժբախտութիւնը այն է, որ երբ արուեստը արագօրէն տարածելու «ազնի» մղումը լրիւ տնտեսական մտահոգութիւններով տեղի կ'ունենայ, այսպէսով հարկադրաբար արուեստը կ'իջնէ ժողովուրդի մակարդակին, կ'իրագործուի ըստ պահանջի եւ ըստ ըմբռնողական կարողութեան: Ահաւաստի հոս է, որ արուեստի իմաստագրկումը կը սկսի ու մշակութային անկումը կը շարունակուի, որ յետադիմութիւն կ'ենթադրէ:

Սխալ չհասկնանք սակայն: Արուեստի համար ձեռք անհրաժեշտ է այնքան, որքան խորքը: Ան ժխտական դեր կը կատարէ միայն այն պարագային, երբ անոր կապը կտրուած կ'ըլլալ խորքին ու բովանդակութեան հետ:

Թէեւ տնտեսական գործօնը մեծ դեր եւ նշանակութիւն ունի արուեստի զարգացման համար, սակայն երբ նպատակը զուտ առեւտրական է, զիջումները կը սկսին ու նախ եւ առաջ մակարդակը կը տուժէ:

Մշակութային մեր կեանքին մէջ յաճախ կը հանդիպինք անմակարդակ ձեռնարկներու, որոնք կը նախաձեռնուին հիմնուելով ժողովուրդի պահանջքի վրայ: Թէ՛ անհատ արուեստագետներ, թէ՛ մշակութային միութիւններ որակաւորի կողքին յաճախ ժողովուրդին կը հրամցեն նաեւ անորակ արուեստի գործեր:

Ժողովրդական արուեստը պետք է շփոթել ժողովրդականացած արուեստին հետ: Երբ ժողովրդական արուեստը ունի բանահիւսական նշանակութիւն, աճ կը մտնէ այլ արժեքի մէջ եւ կը գնահատուի իբրեւ այդպիսին:

Անցանկալի ժողովրդականացած այն արուեստն է, որ կ'իջնէ հասարակութեան մակարդակին՝ ընդունուելու համար անկէ: Իսկ իսկական ու իրաւ արուեստը դժուարութիւններու եւ անելներու հանդիպելով հանդերձ, իրեն հետ վեր կը բարձրացնէ նաեւ ժողովուրդը: Երբ այս հիւղույթը շարունակուի եւ արուեստը նոր նուաճումներ արձանագարէ, ինքնաբերաբար տեղի կ'ունենայ մշակութային զարգացում, որ ինքնին ժողովրդային յառաջդիմութիւն կ'ենթադրէ:

Ժողովրդականացած անորակ արուեստը կարելի է արմատախիլ ընել ժողովուրդին մէջ: Ընդհակառակը, թերեւս անհրաժեշտութիւն մըն է: Սակայն երբ մշակույթի կերտիչներն ու մշակութային միութիւնները իրենք կամուրջ կ'որոգեն, ապա, անհասկնալի հոս է, որ կը սկսի ողբերգութիւնը, որ թէ՛ տնտեսական, թէ՛ մշակութային սնանկութիւն կ'ենթադրէ:

Միացեալ Նահանգներ ազգային գեղարվեստի վրայ անգիմագիծ կը նկատուին, սակայն հզօր երկիր են: Անոր համար տնտեսական գործօնը շատ աւելի կարեւոր է, քան՝ որակաւոր արուեստը: Հետեւաբար ան ոչ միայն մտահոգ է դիմագիծ կերտող բարձրակարգ արուեստով, այլ ընդհակառակը, իր ժողովրդականացած եւ ձեռնարկուած արուեստը տարածելու հսկայական ճիգի մը մէջ է՝ իրագործելու համար նաեւ իր համաշխարհայնացման ծրագիրները:

Մենք եւ մեզի նման փոքր ժողովուրդները, պահելու համար մեր ազգային նկարագիրը ու ինքնուրույնութիւնը, կը պայքարինք համաշխարհայնացման դէմ: Եւ եթէ մենք այսօր քայլ չպահենք կեանքի զարգացման ու արագութեան հետ, եթէ էկերտեք բարձրորակ եւ ուրոյն մշակույթ, ապա ոչ միայն մեր ազգային դիմագիծը կ'աղաւաղուի, այլ նաեւ մեր գոյատեւումը կը վտանգուի:

Սփիւռքի մէջ առաւել եւս զգաստ եւ զգուշ պետք է ըլլալ...

ՄՈՎԱՍԵՍ ԾԻՐԱՆԻ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀՄԱՐ

Բոլոր անձնը, որոնք կը փափաքին «Ազգայն»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պետք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման բուժանձեռն անձնակազմի մը առջ, ՄԻՆԶԵՒ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՉԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Ժամանակը ծնում է նաեւ իր գիտնականին, իր գրողին իր նկարչին, մի խօսքով՝ իր մարմնաւորողին, որ տարիներ, գուցէ տասնամեակներ ու հարիւրամեակներ յետոյ միայն պիտի ճանաչուի:

Իսկ մինչ այդ, եթէ նա նկարիչ է, ծնունդն են կտաւներ, որոնք հասարակութիւնը ընդունում է կամ ոչ: Ու ամէն նոր կտաւի հետ՝ մերժման ցաւ կամ հաստատման բերկրանք:

Այդ խոհերին ես տրուում ամէն անգամ, երբ դիտում ես կտաւներ, որոնց հեղինակը Հենրիկ Գարուկեանն է: Իկարիչը ծնունդ է վանաձորում, սակայն, որքան էլ զարմանալի է, նրա ստեղծագործութիւններում էի գերիշխում

բնակարգ: Ծննդավայրի բնաշխարհի գեղեցկութիւնը հաղորդուել է, թերեւս, այլ գործերին, ուր բնութիւնը պատկերուած է: Հայեացքը կանգ է առնում կտաւի վրայ ու թրթռում գոյներէ հետ՝ բազմերանգ ու, միաժամանակ, մուգ, գունաւոր ու սեւ - սպիտակ: Երանգները շողարձակում են պայծառութեամբ, նրանց ետեւում եւ նրանց անցումներում տարիների փոշին է ու պատմութիւնն է անցած ճանապարհի, ապրած - չապրածի, արած - չարածի: Եւ նորից աշխատանք. նոր դիմանկարչի գեղեցկի ու տգեղի, նարի ու բարու անհաշտ ներդաշնակութեամբ: Ամէն նոր աշխատանքի մէջ զգացում է ժամանակի դրոշմը, այդ էլ

Հենրիկ Գարուկեանի խօսքով, բնական է, քանի որ ամէն նորի հետ նորանում է ամէն բան, իսկ իր կտաւները՝ երիտասարդ տարիների ու այժմեան, տարբերում են: Այսօրուան նկարներում նկատելի են հմտութիւնն ու վարպետութիւնը, սակայն չկայ երիտասարդ տարիների համարձակութիւնը, ինչն էլ, նկարչի կարծիքով, լուրջ կորուստ է:

Գարուկեանի կտաւները շրջել են Հայաստանից դուրս՝ ամէն երկրում՝ ընկալուելով իւրովի, ներկայացնելով մարդուն իր յուզումներով ու խոհերով, իր տխուր ծիծաղով, իր մղձաւանջային երազով: «Յանկացած՝ մարդ կարող է նկարել, քանի որ բոլորն էլ մանուկ հասակում նկարում են՝ անկախ ամէն ինչից, քանի որ նրանք ձեռքագատուած են բարդութիւններից: Այդ տարիքում մարդն ամէն բան անում է ըստ էր ցանկութեան, իսկ երբ դալիս է պահը ու սկսում է գիտակցել՝ վախենում է իր ասելիքի անհասելի խորքից, գոյների խօսուն



Հ. Գարուկեանի «Յանկացած» (1994)

լուծութիւնից»:
Հենրիկ Գարուկեանը յաղթահարել է այդ ամէնը, եւ նրա ասելիքը երբեք չի գունաթափուում:

ՀՆԻՓՍԻՄԷ ՎԱՐԳԱՆԵԱՆ

«Հայեացք Երեւանից» 2002

ԱՏՈՒՆ ՀԻԹԼԵՐ

Շարունակում՝ 5րդ էջէն

Երբ նախագահին մօտիկ բարեկամներ, ծանօթներ եւ Արեւելեան էլիտայի կալուածատէրերը սկսան անոր ստիպել Հիթլէրը կառավարութեան անդամ նշանակելու, այն ժամանակ նախագահը ընդունեց:

Ճամբան բաց էր արդէն նացիներու իշխանութեան գլուխ գալուն համար: Նացի բռնատէր Ատտոլֆ Հիթլէրը դրամատիքերու օգնութեամբ իշխանութեան գլուխ եկաւ 30 Յունուար 1933ին, սակէ 70 տարի առաջ, եւ երկիր տէրն ու տիրակալը մնաց 13 տարի շարունակ:

13 Մարտ 1933ին Եռգէֆ կէօպէսը կը նշանակուի քարոզչութեան նախարար: 2 Օգոստոս 1934ին կը մահանայ Գերմանիոյ նախագահ Մարշալ Փաուլ ֆոն Հինտենպուրկ, Ատտոլֆ Հիթլէրը կը դառնայ «Ճիւրհէրը ռալիս քանցըր» (վարչապետ), նախագահ Գերմանիոյ երրորդ կայսրութեան եւ գլխաւոր հրամանատար ամբողջ բանակին»:

«Առանց գերման գործարանատէրերուն եւ նացի կուսակցութեան համագործակցութեան, Ատտոլֆ Հիթլէրը եւ իր կուսակցութեան անդամները որեւէ ձեռքով չէին կրնար Գերմանիոյ իշխանութիւնը ձեռք ձգել եւ ամբողջով զգայն, իսկ երրորդ Ռայխը չէր համարձակել արտաքին զարգացումը: Այս խօսքերը արտասանած է ամերիկացի դատախազը 27 Օգոստոս 1947ին Նիւրնբերգի պատերազմական ոճիրներու դատարանին մէջ:

1933ին հայ ժողովուրդի բարեկամ Արմին Թ. Վեկելը նամակ մը գրեց նացի ղեկավարին՝ շեշտելով, որ՝ «Եթէ վերջ չէր ըլլար այդ բարբարոս քաղաքականութեան, Գերմանիան կը կործանուէր»: ան նոյնպէս բողոքի ձայն բարձրացրեց հրեաներու հալածանքին դէմ:

Գերմանական ոստիկանութիւնը զայն ձերբակալեց ու բանտ նետեց: Եօթը բանտ, երեք ճամբար եւ վերջապէս փախուստ դէպի արտասահման:

2 Յունիս 1934ին Ա. Հիթլէրը սպաննել կու տայ իր ամէնէն մտերմ ընկերը՝ «Է. Ան»-ի ղեկավար Էռնսթ Ռիւսմը, որ միաժամանակ մըն էր եւ գերմանական վարչամեքենայի մէջ դարձած էր հեղինակաւոր անձնաւորութիւն մը: Անոր տեղ կը նշանակուի «Է. Ան»-ի ղեկավար Հայնրիխ Հիմլէր: Վայմարի հանրապետութեան վերջին վարչապետ Բուրք ֆոն Շլայխէրն ալ իր տան մէջ կը սպաննուի, նոյնպէս կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր պետ իր գրասենեակին մէջ:

31 Յունուար 1935ին տեղի կ'ունենան ընտրութիւններ Սար նահանգին մէջ. քուէարկողներուն 91 առ հարիւրը կը քուէարկեն նահանգը Գերմանիոյ միացնելուն օգտին: Այս նահանգը ժամանակին Ճրանսայի կապուած էր: 7 Մարտ 1936ին Հիթլէրը կը գրաւէ Ռայխլանտի նահանգը: Նոյն տարին Պերլինի մէջ տեղի կ'ունենան Ողիմպիական խաղերը:

13 Մարտ 1938ին գերմանական բանակը կը շարժի դէպի Աւստրիա ու առաջը պատերազմի կը գրաւէ զայն եւ կը միացնէ Գերմանիոյ կազմելով Մեծն Գերմանիա: Նոյն տարուան ընթացքին Գերմանիոյ, Անգլիոյ, Իտալիոյ եւ Ճրանսայի միջեւ Միւնիխի մէջ կնքուեցաւ համաձայնաւորումը, որով Չեխոսլովակիոյ միջին շրջանը կը միացուէր մեծ Գերմանիոյ: Դաշնակիցները կը զոհէին Չեխոսլովակիան իբրեւ քաղաքական նոյնազ: Այնուհետեւ Հիթլէրի բանակը կը մտնէ եւ կը գրաւէ այս անգամ Չեխոսլովակիան: 23 Օգոստոս 1939ին Գերմանիան եւ Խորհրդարանի Միութիւնը կը

ստորագրեն ոչ յարձակողական դաշնագիր մը, միեւնոյն ժամանակ այդ երկու երկիրներուն արտաքին գործք նախարարները՝ Մորիթով եւ Ռիպիթրոփ կը ստորագրեն զաղտնի բանաձեւ մը, ուր կ'որոշուի Լեհաստանը բաժնել իրենց միջեւ: 1 Սեպտեմբեր 1939ին գերմանական բանակը կ'արշաւէ եւ կ'գրաւէ Լեհաստանի կէտը, իսկ 17 Սեպտեմբերին Խորհրդային Միութեան կարմիր բանակը կը յարձակուի եւ կը գրաւէ Լեհաստանի արեւելեան հոլանդասերը: Գերի կը բռնուի 217 հազար զինուոր, մէջը ըլլալով 10 հազար սպայ, ժամանակ մը ետք այդ բոլոր սպաները անտառի մը մէջ սպաննուեցան, եւ այսպէս՝ Լեհաստանը մօտ 6 տարի աշխարհի քարտէսին վրայէն անյայտացաւ:

Ատտոլֆ Հիթլէրը, դեռ Լեհաստանը չգրաւած, Օպերզագպէրի քաղաքին մէջ 22 Օգոստոսին իր հրամանատարներուն եւ զօրավարներուն առջեւ խօսած իր ճառին մէջ ըսած է՝ «Ես իմ Մահուան գունդներու հրահանգ տուած եմ, առանց ողորմութեան կամ գթութեան, տղամարդիկ, կիներ եւ երեխաներ, որոնք սլաւական ցեղին կը պատկանին, ոչնչացնել: Միայն այսպէս կրնանք տէր դառնալ այն կենսատարածքին, որուն մենք կարիք ունինք: Վերջապէս, այսօր ո՞վ կը յիշէ դեռ այսօր հայերու բնաջնջումը»:

8 Նոյեմբեր 1939ին Միւնիխ քաղաքին մէջ ձորձ էլզնէր անուանով մարդ մը ուղարկ մը կը պայթեցնէ Պուրկերպոյի գետնայարկին մէջ, ուր Ատտոլֆ Հիթլէրը նոյն ժամանակ կը բանախօսէր թէ՛ Է. Ա. Հիթլէրը այս մահափորձէն կ'ազատի, բայց ու՞ր հոգի կը մեռնի եւ երեք ուրիշներ կը վիրաւորուին: 9 Ապրիլ 1940ին գերմանական բանակները կը գրաւեն Դանիան, 5 շաբաթէն, Հոլանտան, Պելճիկան, Ֆրանսան՝ 6 շաբաթէն, Յունաստանը՝ 3 շաբաթէն, Եւրոպայի 11 օրէն, եւ Անգլիայէն զատ Գերմանիոյ սահմանները հասած էին մինչեւ Պրէսթ - Լիթովսը: 22 Յունիս 1941ին գերմանական բանակները հրաման կը ստանան յարձակելու Խորհրդային Միութեան վրայ՝ Լեհաստանի վրայով: Լաթվիան, Լիթուանիան, էսթոնիան, Ուկրաինան կը գրաւուին եւ գերմանացիները կը հասնին մինչեւ Լենինգրադի հասնիքը կամ ճառագործները: Ստալին կը հասնէին Պերլին: Ստալին կը պաշարուէր արդէն Ա. Հիթլէրի մէջը կոտորած էր: Միայն Կիւրինի յոյսեր կը ներշնչէ գերմանական պաշարուած բանակին օրէն օգնելու առնչութեամբ բայց ան ալ չի յաջողիր: Ատտոլֆ Հիթլէրի «Սեպտեմբերի խօսակցութիւնները» կամ ճառերը՝ ճառի մըն էր կամ ետք, բոլորն ալ արձանագրուած են: Մենք այստեղ թարգմանաբար կը յիշենք ցեղապաշտ եւ բռնատէր Ատտոլֆ Հիթլէրի խօսած ճառերէն մէկը, որ տեղի ունեցած է 5 Յունիս 1942ին:

մանական բանակները երկու շաբաթուան ընթացքին կը գրաւեն Դանիան, 5 շաբաթէն, Հոլանտան, Պելճիկան, Ֆրանսան՝ 6 շաբաթէն, Յունաստանը՝ 3 շաբաթէն, Եւրոպայի 11 օրէն, եւ Անգլիայէն զատ Գերմանիոյ սահմանները հասած էին մինչեւ Պրէսթ - Լիթովսը:

22 Յունիս 1941ին գերմանական բանակները հրաման կը ստանան յարձակելու Խորհրդային Միութեան վրայ՝ Լեհաստանի վրայով: Լաթվիան, Լիթուանիան, էսթոնիան, Ուկրաինան կը գրաւուին եւ գերմանացիները կը հասնին մինչեւ Լենինգրադի հասնիքը կամ ճառագործները: Ստալին կը պաշարուէր արդէն Ա. Հիթլէրի մէջը կոտորած էր: Միայն Կիւրինի յոյսեր կը ներշնչէ գերմանական պաշարուած բանակին օրէն օգնելու առնչութեամբ բայց ան ալ չի յաջողիր: Ատտոլֆ Հիթլէրի «Սեպտեմբերի խօսակցութիւնները» կամ ճառերը՝ ճառի մըն էր կամ ետք, բոլորն ալ արձանագրուած են: Մենք այստեղ թարգմանաբար կը յիշենք ցեղապաշտ եւ բռնատէր Ատտոլֆ Հիթլէրի խօսած ճառերէն մէկը, որ տեղի ունեցած է 5 Յունիս 1942ին:

(Շար. 2)

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը. ԱՆԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԳՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԸ

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԿԱՆ 30ՐԻՆՈՒՄԻ ՄՐՑԱԼԸ (Ութերորդ Տարի)

Ալեք Մանուկեան կեդրոնի Մշակութային Յանձնախումբը կը կազմակերպէ բանաստեղծական յորինումի մրցանք մը, նուիրուած՝ Գրիգոր Նարեկացիի «Մատենա Ողբերգութեան» 1000ամեակին, բոլոր հայ պարսման - պարսմանուհիներու համար, Ա. 12-15 եւ Բ. 16-18 տարիքի խմբաւորումներով: Իւրաքանչիւր անձ մրցումին կը մասնակցի հայերէն երկու բանաստեղծութիւններով, առաջին՝ պարտադիր ընդհանուր, երկրորդը՝ ազատ: Ստեղծագործութիւնները յանձնել մինչեւ 30 Ապրիլ 2003, հետեւեալ կեդրոնները:

Դարուկի - Յովակիմեան (Շրջ. Թապթ), Պոլոս Գ. Կարմիրեան (Անթիլիս), Վահան Թեքեան (Պուրճ Համուտ), Վարժարաններու մասնաճիւղերու եւ Ալեք Մանուկեան կեդրոնի քարտուղարութեան (Ութերգութեան): Ստեղծագործութիւնները յանձնել փակ պահարանով, որուն մէջ նշուած ըլլան մասնակցողին անունը, ծննդեան քուսակը (ամիս, տարի) եւ հեռագրային թիւը: (Վերոյիշեալ պայմանները պետք է յարգուին մրցանակ ստանալու համար): Ա. մրցանակ՝ 100 տոլար Բ. մրցանակ՝ 50 տոլար Արդիւնները պիտի յայտարարուին եւ մրցանակակիրները պիտի պարգևատրուին գեղարուեստական ձեռնարկի մը ընթացքին:

ԱՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵԳՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԸ

Իրավի Պատերազմ

ՀՆԱԳԱՐԵԱՆ ԻՐԱՔԻ ԴԻՒՐԱԲԵԿ ԳԱՆՁԵՐԸ՝ ՎՏԱՆԳՈՒԱԾ

«ԻՆԹԵՐՆԵՇՆԱԼ ՇԵՐՄԱՆ ԹՐԻՊՈՒՆՏ» ՕՐԱԹԵՐԹԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՄԲԱԳԻՐԸ՝ ՍՈՒՐԵՆ ՍԵԼԻՔԵԱՆ ԿԸ ԳՐԵ ԻՐԱՔԻ ՇԱՄԱՇԽԱՐԿԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԳՈՒՐՆԵՐՈՒՆ ԽՈՑԵԼԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թըն Հենրի Լէյքրոտի կողմէ, երեւան եկած են զարմանահարազ հարթաքանդակներ, որոնք կը զարդարէին Ասուրնասիրպալ Բ-ի (իշխած է Ն.Ք. 883էն 859) պալատին պատերը: Անոնցմէ ոմանք կորսուած են, երբ Լէյքրոտի նաւերէն մէկը գլխիվայր դարձած է Տիգրիսի մէջ: Ուրիշներ պարծանքն են Բրիտանական թանգարանին, Նիւ Եորքի Մեթրոփոլիթըն թանգարանին եւ Իրաքի թանգարանին: 1970ական տարիներուն նոր պեղումներէ ի յայտ եկան այլ հարթաքանդակներ. անոնք գետեղուած են Մուսուլի եւ Պաղատի թանգարաններուն մէջ եւ շատ ծանր են ապահով վայր մը փոխադրելու համար:

Նիմրուտը տակաւին իր գանձերուն եւ պատմութեան բանալի տեղեկութիւններուն միայն մէկ մասը լոյս աշխարհ բերած է: Հոնկէ յայտնաբերուած նրբաշխատ փղոսկրէ ցուցատախտակներուն առեղծուածը տակաւին չէ լուծուած: Տարբեր ոճերով իրագործուած այս ցուցատախտակները կ'արտացոլեն տարբեր տարածքներու եւ ժամանակաշրջաններու արւեստը: Սարսուռ կը պատճառէ այն զգացումը, թէ ի՛նչ կրնայ պատահիլ դիւրաբեկ իրերու, ինչպէս Ասուրնասիրպալ Բ-ի ժամանակներէն՝ Ն.Ք. 9րդ դարուն պատկանող ցուցատախտակի մը, որ այժմ կը գտնուի Իրաքի թանգարանին մէջ:

Միջին Արեւելքի քաղաքակրթութեան այս օրրանին մէջ տեւական նոր յայտնաբերումները կը կատարուին: 1989էն 1990ի միջին իրաքցի հնագէտներու խումբը մը Մուզահիմ Մահ-մուտի գլխավորութեամբ բացաւ դամբարաններ, որոնք կը պարունակէին գոհարեղէն, ինչպէս նաեւ՝ ոսկեայ եւ արծաթէ անօթներ, եւ որոնց վրայ փորագրուած էին անունները Ն.Ք. 9րդ եւ 8րդ դարերուն իշխած ասորեստանցի թագաւորներու չորս կողակիցներուն: Ոսկեայ իրերը, որոնք միասնաբար կը կշռեն 40 քկ., հաւանաբար պահուած են ստորերկրեայ նկուղի մը մէջ:

Անցանց աշնան հնագէտներու նոյն խումբը կը հետազոտէր Նիմրուտի մէջ Իշթարի տաճարը եւ յայտնաբերեց Մուսուլի յատուկ մարմարով շինուած դարպաս մը, որուն վրայ քանդակուած էին զիջքաբանական կերպարներ, որոնք արտասովոր են իրենց գեղարվեստի մէջ: Երջանին հնագիտական վայրերը անյայտ կարիքը ունին զինուորական պաշտպանութեան, եթէ պատերազմ տեղի պիտի ունենայ: Կանգուն կոթողները շատ աւելի անպաշտպան են: Պարթեւական Պարսպաստանի հզօր սեմական մայրաքաղաք Հաթրայի Մեծ տաճարը, որ մեծ մասամբ վերակառուցուած է, կը պարունակէ այնպիսի քանդակներ, որոնք կը

պատկերեն եզակի պահ մը սեմական մշակոյթի աշխարհին մէջ, առաջին կամ երկրորդ դարուն: «Թաք էլ Քասրա» կամ Խոսարովի խոռոչը անունով ճանչցուած ճոր դարու պալատը, որ կառուցուած է Թիաֆուսի մէջ (անգլերէնով՝ Սիթիֆուս) Պարսկաստանի (որուն մաս կը կազմէր Իրաքը) սասանեան կայսեր կողմէ, կարեւորութիւն կը ներկայացնէ ոչ միայն ճարտարագետական պատմութեան մէջ, այլ նաեւ հնագրեան աշխարհի գերագոյն խորհրդանիշն է իսլամութեան նախօրեակին:

Այլ կոթողներ նոյնիսկ աւելի մեծ նշանակութիւն ունին իսլամական աշխարհի հաւաքական հոգեբանութեան համար: Սամարայի մէջ Ապու Տուլայֆի մեծ մզկիթը, որ կառուցուած է 847ին, Սուլթանաբէլի խալիֆային կողմէ, ունի հսկայական մինարէ մը, որ աստիճանաբար կը բարակնայ պարուրածէ ոստումներով, որոնք կը յիշեցնեն բարեւոնական ձեւագծումներ: Ասիկա համաշխարհային կարեւորութիւն ներկայացնող կոթող մըն է, միայն, որ մինչեւ իսլամական ժամանակները կը հասցնէ Ն.Ք. երկրորդ հազարամեակին ծնունդ առած աւանդութիւն մը: Այս մզկիթին մօտ կայ զինուորական խարխիս մը: Զգացական այն նշանակութիւնը, որ ունի Աբբասեան խալիֆայութեան սկիզբը կառուցուած այս մզկիթը, իսլամներուն մտքին մէջ կը ստեղծէ այն կասկածը, թէ անիկա վտանգաւոր թիրախ կրնայ դառնալ դիպուածով, թէ զիտումաւոր կերպով:

Ապա կայ նաեւ Մուսուլ քաղաքը, որ ժամանակին իրաքի թագին գոհարն էր: Անիկա երկրին Ֆլորանսն էր, ազնուականութեան նոյն ալիքներուն վրայ: Նոյնիսկ տարիներ շարունակ անմիտ «վերանորոգութեան» պատճառով արտաքանապէս փոփոխութեան ենթարկուած կոթողներէն շատերը մեծ կարեւորութիւն կը ներկայացնեն:

Կղմիտքէ մինարէն, որ կառուցուած է 1170էն 1172ի միջեւ, իրանեան ոճով եւ կը թեքի անկիւնի մը վրայ, չի կրնայ տոկալ շրջապատին մէջ ռազմական մեծ գործողութեան մը: Եահիա Ապու Մոհամմատի դամբարանը կը կրէ 1229 թուականը: Անիկա արտաքանապէս այլափոխուած է թանձրաձոյլ այն պատեանին պատճառով, որ օգտագործուած է «վերականգնելու» համար անոր ցած մասերը: Այսուհանդերձ զայն պատող պաղլեղի (փիրքընազ) գոյնով սալիկներուն վրայ պահպանուած են թմրուած կաւով փորագրուած գեղարվեստ արձանագրութիւններ ու ճարտարագետական զծագրութիւններ, որոնք զայն կը վերածեն վերացական զարդարութեամբ գլուխ գործոցի: Դամբարանին ներսը շիններու կողմէ ակնա-

ծանք վայելող 12 իմամներու նուիրուած աղօթք մը գեղազիր տաւերով արձանագրուած է սպիտակ մարմարի եւ սեւ խորապատկերի վրայ: Անիկա 13րդ դարու արարական կոթողային գեղագրութեան մեծագոյն նմուշներէն է:

Մուսուլի արեւելքը, Քարաքոչի մօտ, Մար Պեհնայի 12րդ դարու վանքը, որուն կրօնաւորները կը պատկանին սուրական աւանդութեան կապուած կաթոլիկ եկեղեցիին, գրեթէ անխաթար պահպանած է իր հարուստ զարդաքանդակները: Թագաւորական դուռը, որ կու գայ 1164էն, տարբեր հաւատքներու կողմէ օգտագործուած Ձանկիտի ոճով քրիստոնէական քանդակագործութեան եզակի նմուշ մըն է:

Միջին Արեւելքի ճարտարագետական պատմութեան մէջ կոթողային այլ կառույցներ ցրուած են երկրին տարածքին: Սամարայի մօտ իմամ Տուրի դամբարանը հրաշալի տեսարան մը կը պարզէ իր քառակուսի բարձր պատհանդանով, որուն վրայ կանգնած են հետքահանգ փոքրացող հնգանկիւն որմնախորշեր: Այս մէկը դարձեալ իւրայատուկ կոթող մըն է մասնաւորաբար Իրաքի եւ ընդհանրապէս իսլամական ճարտարագետութեան մէջ:

Աւելի հեռուն՝ արեւմուտքի Ութհայտի շրջանին մէջ, քառանկիւն հսկայական կառույց մը իր խոռոչաւոր պատկերասրահներով հաւանաբար գինետուն մը եղած ըլլալու է կամ՝ ճամբորդներու յատուկ պաշտպանուած հսկայական իջեւան մը: Կ'ենթադրուի, որ անիկա կու գայ 8րդ դարէն: Այս կառույցը կը յիշատակուի կանուխ շրջանի իսլամական ճարտարագետութեան վերաբերող իւրաքանչիւր ուսումնասիրութեան մէջ:

Միայն կարելի է յուսալ, որ նման այլ մեծ կոթողներ ուշադիր կերպով հաշուի առնուած պիտի ըլլան ռազմական ծրագրիներու մէջ: Միայն արուեստը խնդրյալ առարկայ չէ հոս: Ամենադժուր այն մտածումը, թէ ամբիկեան ուսմբը կրնայ իր արձագանգել իսլամական արձագանգ աշխարհին, կրնան պատճառել այնպիսի խոցեր, զորս բուժելը կրնայ դիւրին չըլլալ: Հնագրեան կոթողները եւս մեծ արժեք կը ներկայացնեն այստեղ: Հաթրայի մէջ գերագանց գեղագրութեան արձանագրութիւններ հանդիսաւոր կերպով կը պատմեն 12րդ եւ 13րդ դարերուն սուլթաններու այցելութիւններուն մասին:

Հնագրեան քաղաքակրթութիւնները ունին սեփական ինքնագիտութիւն մը, որ միշտ ամբողջութեամբ չ'ընկալուի անոնց սահմաններէն անդին: Հարկ է նկատի ունենալ ասիկա:

ԻՐԱՔՅԻՔ ԺԱՄԱՆԱԿ ԿԸ ԾԱՀԻՆ ԹԱՏԵՐԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ

«Պի. Պի. Սի.»-ի ՊԱՂՏԱՏԻ ԹՂԹԱԿԻՑ ՓՕԼ ՎՈՒՏ ԿԸ ՆԿԱՐԱԳՐԵ, ԹԵ ՊԱՂՏԱՏ ԻՆՉՊՒԵՍ ԼՈՒՌ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Մինչ իրաքցիք կը դիմագրաւեն հաւանական պատերազմի մը եւ գրաւումի հաւանականութիւնը, զարմանալի չէ, որ անոնք կարիքը ունին գուարճանալու:

Հետեւաբար Պաղատի ժողովուրդը թատրոն կ'ուղղուի ամէն գիշեր:

Կատակերգութիւններ կը ներկայացուին իրաքի մայրաքաղաք Պաղատի լեցուն սրահներու մէջ: Միացյալ ազգային թատերասրահին մէջ ներկայացուող «Թափառաշրջիկները» թատերախաղը դիտելու եկած բազմութեան:

Թատարախաղը մասամբ երաժշտախառն էր, մասամբ՝ զաւելչու եւ մասամբ՝ սոփի օփերա: Հանդիսատեսները եւս այլազան էին: Մայր մը իր նորածինը կ'օրօրէր իր ծնունկերուն վրայ: Առջեւի շարքը նստած էին երիտասարդներ, ոմանք՝ զինուորական համազգեստով: «Կ'ենթադրեմ, որ մարդիկ կարիքը ունին նման թատրոն դիտելու», կ'ըսէ թատերախաղին գլխաւոր դերակատարուհին՝ Ուահատ Իպրահիմ: Դեղին գանգուր մագբերով այս դերասանուհին շուրջ 7 դեր մարմնաւորեց թատերախաղին մէջ:

«Այս տեսակի կատակերգութիւնը կ'օգնէ մարդոց, որ պէտքի կարենան դիմագրաւել իրենց գոտեւորութիւններն ու տառապանքը՝ 12 տարուան պատժամիջոցներու պատճառով: Երբ բեմին վրայ կը գտնուիմ, պարզապէս կ'ուզեմ հանդիսատեսներուն դէմքին վրայ ժպիտ մը տեսնել», կ'ըսէ ան:

«Թափառաշրջիկները» թատերախաղը ինքնին շատ բան կը պարունակէ պատժամիջոցներու ենթակայ կեանքի մասին: Տիպարներէն մէկը կ'ըսէ, թէ այժմ միայն ֆալաֆէլ կրնայ ուտել եւ կը խնդրէ իրեն տալ պաշտօն մը, որուն համար ամսական 15 տոլար պիտի ստանայ:

Գլխաւոր դերը ստանձնած է իրաքցի մեծ կատակերգակ Իսասիմ Ալ Ճուլայի (64 տարեկան):

«Թէեւ Ամբիկա կը յայտարարէ, թէ պիտի յարձակի մեր վրայ, սակայն մարդիկ տակա-

ւին թատրոն կու գան հաճոյք զգալու համար, կ'ըսէ ան: - Կը փորձեմ լաւագոյնս ընել հանդիսատեսները գոհ ձգելու համար, որովհետեւ այս ձեւով դիմադրած կ'ըլլամ ամբիկեան յարձակողապաշտ տրամադրութիւններուն: Բոլոր իրաքցիները զինուած են: Անոնք կը սպասեն ամբիկացիներուն: Թող գան: Բոլորս նեցուկ կը կանգնինք Սատտամ Հիւսէյնի»: Հանդիսատեսները կը սիրեն թատերախաղը: 30 տարեկան լրագրող մը՝ Լէյլթ Մոհամէտ 3 անգամ տեսած է զայն: «Ամէն անգամ, որ կու գամ, նոր բան մը կը տեսնեմ, - կ'ըսէ ան: - Ետք բանի կան, որոնք իրենց ազդեցութիւնը կը գործեն մեր ընկերութեան մէջ: Խօսքս կը վերաբերի պատժամիջոցներուն: Աշխարհի ժողովուրդներուն պատգամ մը ունիմ. մեզ չեն մտահոգեր սպառնալիքները: Նոյնիսկ եթէ պատերազմ տեղի ունենայ, պէտք է ապրինք մեր կեանքը: Պէտք է շարունակենք ապրիլ, ինչպէս որ կ'ուզեցինք»:

Ցերեկը Պաղատի անսպասելիորէն եւ վախազուկ կերպով հանդարտ է:

Երեւութեամբ այն չի թուի, թէ անիկա պատերազմի սեմին գտնուող քաղաք մըն է: Այսուհանդերձ հաւանական յարձակումի մը համար պատրաստութիւններ կը տեսնուին արագ եւ կանոնաւոր կերպով:

Ատամիա արուարձանին մէջ դուլու Մուսիտա Ալ Ուայնտուի ցոյց կու տայ այն պաշտպանուած սենեակը, ուր իր կինը, ինք եւ իր 3 աղջիկները պիտի ապաստանին, երբ ռմբակոծումը սկսի:

Անոնք հօր մը փորած են իրենց պարտէզին մէջ եւ ուտելիք կ'ամրարեն:

«Այստեղ կը տեսնես աւելի քան 150 քկ. ալիւր, 30 քկ. շաքար եւ 10 քկ. բրինձ», կ'ըսէ ան՝ զիս պատեցնելով տունին մէջ:

Կը հարցնեմ, թէ արդեօք ինք եւ իր դրացիները պատրաստ են երկարատեւ պաշտպանութի մը:

«Կ'ենթադրեմ, որ այստեղ չորս ամսուան պաշար ունինք», կը պատասխանէ ան:

ԴԵՐԱՍԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՈՂՈՔ

ԱՆՅԵԱԼ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱԶԽԱՐԿԻ ՏԱՐԱԾԵՒՆ ԲԵՆԻ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԲՈՂՈՔ ՍԸ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԻՐԱՔԻ ՎՐԱՅ ՀԱՒԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԿՈՒՄԻ ՍԸ ԴԵՍ, ԲԵՍԱԳՐԵԼՈՎ ԱՐԻՍՈՑՖԱՆԵՍԻ ՄԵՎ ԹԱՏԵՐԱՍԱՐԸ

Դերասաններու միջազգային բողոքի մը կազմակերպիչներուն համաձայն, պատերազմի դէմ տրամադրութիւններու իբրեւ արտայայտութիւն՝ Արիսթոֆանէսի հակապատերազմական «Լայսիսթրաթա» կատակերգութիւնը ընթերցուեցաւ 919 վայրերու մէջ, 56 երկրներու տարածքին, որոնց շարքին՝ Վենեսուելլա, Հնդկաստան, Չինաստան եւ Հոնոնգուրա:

Ինչըրտ Ուելսըն, Ժոզէֆ Ֆայնէն եւ Լինտա սէյ Տանըրն մաս կը կազմէին այն 300 դերասաններուն, որոնք յուսական դիմակներ դրին 3 վայրկեան լուծութիւն մը բեմադրելով Լոնտոնի Խորհրդարանի հրապարակին վրայ, նախ-քան թատերախաղէն հաստուածի մը ընթերցումը:

Արիսթոֆանէս այս կատակերգութիւնը տեղադրած է հնագրեան Յունաստանի մէջ, ուր կ'ինքն մերժած են սեռային յարաբերութիւն ունենալ, մինչեւ որ տղամարդիկ որոշեն արգիլել պատերազմը:

ԿԱԽԱՐԿԱԿԱՆ ՊԱՇ

Կազմակերպիչներ «Լայսիսթրաթայի ծրագիրը» կը համարեն այսախոհութեան մեծագոյն արտայայտութիւնը թատերական աշխարհին մէջ:

Այս մասին առաջին անգամ մտածուած է Նիւ Եորքի մէջ, Յունուարի սկիզբը, երկու դերասանուհիներու՝ Քեթրին Պլուսի եւ Երըն Պաուլի կողմէ:

Պլուսի կ'աշխատէր «Լայսիսթրաթա» թատերգութեան շարժապատկերի արդի պատշաճեցումին վրայ, երբ լսած է «Թիէթըր Ըփէյնսթ Ուոր» անունով խմբաւորումի մը մասին:

Այս խմբաւորումը թատերախումբերը կը մղէր, որ պատերազմի դէմ յայտարարութիւններ հրատարակէին յայտագիրներու մէջ, կամ պատերազմի դէմ խօսէին վարագոյրը բացուելէ առաջ:

Պլուսի մտածած է «Լայսիսթրաթա» ընթերցել իբրեւ իր մասնակցութիւնը բողոքին, ապա Պաուլը անոր հեռաձայնած է գործակցութիւն առաջարկելով:

Պլուսի կ'ըսէ. «Կախարդական պահ մըն էր քաղաքակրթութեան եւ թատրոնի պատմութեան մէջ: Ետք մեծ եւ շատ արագ տարածուող բանի մը վերածուեցաւ»:

Երբ երկուքը միասին հաստատեցին համացանցի կայք մը, աշխարհի տարբեր կողմերէն ենամակներ սկսան ստանալ:



Իսլանտայի Ազգային Թատերախումբի գերարուեստական ղեկավար Սթեֆան Պլուսըն կ'ըսէ. «Ամէն ոք խաղաղութիւն կ'ուզէ եւ մտածեցի, որ լաւ պիտի ըլլար եթէ մասնակցէի: Իսլանտայի լաւագոյն դերասանները, շուրջ 20 հոգի պիտի մասնակցին: Ետք լաւ եւ երգիծանքով լեցուն թարգմանութիւն մըն է, ուղղակի կատարուած յունարէն բնագիրէն: Իսլանտայի մէջ զանգուածային ցոյցեր կատարուած են պատերազմի դէմ»:

Լոնտոնի մէջ Սուսանա Եորքի եւ Եայլա Հենքըքի նման աստղեր եւս միացան «Բողոքի դիմակաւոր երգչախումբի մը», Լոնտոնի Խորհրդարանի հրապարակին վրայ:

Շարլ. Էջ 8

Պատրաստեց
Լ. ԿԻՒԼՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՊԱՍԲԵԹՊՈՒ

ՍԱԺԷՍ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍԱՆ ԱԻԱՐՏԱԿԱՆԻՆ

Լիբանանի պասբեթպոլի աղջկանց Ա. դասակարգի ֆայնալ ֆորի իր կատարած երրորդ մրցումին էւս Սաժէս Մար Տումէթ պարտութեան մատնելով Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասը, ապահովեց աւարտական մրցումին իր տոմարը: Նշենք, թէ աւարտական հանգրուանին Սաժէս Մար Տումէթ կը ձակատի Անդրանիկի դէմ, որ իր կարգին իր կատարած երրորդ մրցումին էւս յաղթանակ մը արձանագրեց Էօ. Էն. Պէ.ի դէմ, որ այժմ երրորդ դիրքին համար պիտի ձակատի Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի դէմ:

Երէկուան մրցումին, որ տեղի ունեցաւ Սաժէս Ժըտէյտէի դաշտին վրայ, Հ. Մ. Ը. Մ. թէեւ Ա. կիսախաղին միայն մէկ կէտով ետ կը մնար (39-38), սակայն մրցումին աւարտին Սաժէս 80-63 արդիւնքով հանգիստ յաղթանակ մը արձանագրեց:

ՀԵԾԵԼԱՐՇԱԻ

ՓԱՐԻԶ – ՆԻՍ ՇՐՋԱՎԱԶՔԸ ՇԱՅԵՑԱԲ ՎԻՆՈՔՈՒՐՈՎ

Երէկ աւարտեցաւ Փարիզ-Նիս հեծելարշաւի շրջավազքը (7 հանգրուան): Յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով դապախ Ալեքսանտր Վինոքուրով (Թելէրով) տիրացաւ տիտղոսին, արձանագրելով՝ 23 ժամ 30 վայրկեան եւ 4 երկվայրկեան արդիւնք մը: 2րդ դիրքը գրաւեց սպանացի Միկել Զարապէյթիս, իսկ 3րդ դիրքը՝ իտալացի Տալիտ Ռեպելին:

29 տարեկան Վինոքուրով յայտնեց, թէ իր այս տիտղոսը կը ձօնէ իր խմբակցին եւ ապակիցին՝ Անտոնի Քիվիլիէի, որ հինգ օր առաջ զոհ գացած էր այս շրջավազքին ընթացքին արկած մը ունենալով:

Նշենք, թէ երէկուան 7րդ հանգրուանի մրցումը շահեցաւ սպանացի Տալիտ Պետրուպէօ (Միլանեկա):

ՍԿՈՎՏԻՍԿԱՆ ՖՈՒԹՊՈՒ


ՌԷՅՆՃԸՐԶ՝ ԲԱԺԱԿԱԿԻՐ

Սկովտիոյ ֆուտպոլի Լիկայի բաժակի աւարտականին, երէկ, Ռէյնճըրվ 23րդ անգամ ըլլալով տիրացաւ այս տիտղոսին, երբ «Հէմփտըն Փարք»ի մէջ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր ռիւթիմ թշնամին՝ Սելթիքը: Ռէյնճըրվի կողմէր նշանակեցին Բլաուտիօ Քանի-ճիա (23րդ) եւ Փիթըր Լովէնքըրանտս (34րդ), իսկ Սելթիքի կողմէր՝ Հենրիք Լարսըն (57րդ):

Մրցումին կորսուած վայրկեաններուն, Սելթիքի յառաջապահ ձոն Հարթըն ձախողեցաւ կողի վերածել իր կապմին ի նպաստ շնորհուած փենսիլթին:

ԱՆՏ – ՕԼԻՄՓԻԲ ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Հ. Մ. Ը. Մ. - ԻԺԹԻՄԱՐԻ՝ 1-1



Հ. Մ. Ը. Մ.ի համակիրները մի՛շտ ներկայ՝ դաշտին թրիպիւններուն վրայ

Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 19րդ հանգրուանի մրցումներուն, երէկ, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ. Մ. Ը. Մ. 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Թրիփոլի Իժթիմաիի հետ, որ երթին Թրիփոլի մէջ 5-1 արդիւնքով պարտութիւն մը կրած էր իր իսկ դաշտին վրայ...

Իժթիմաիի բերդը փրկուեցաւ այլ կողմէր, երբ գնդակը, որ դանդաղօրէն կ'ուղղուէր դէպի բերդ, զսպուեցաւ... հորիզոնական սիւնին կողմէ: Մինչ Հ. Մ. Ը. Մ. կը կորսնցնէր երկրորդ կողմը նշանակելու ստոյգ առիթներ, 81րդ վայրկեանին, քոռնըրի մը վրայ, Իժթիմաիի գլուխով նշանակեց իր հաւասարութեան կողմը: 85րդ վայրկեանին Տէնի Նասըր (օրուան անբախտը) կորսնցուց այլ առիթ մըն ալ:

Հկրցաւ մրցումին «ընտելանալ», մինչ անոր խմբակիցները՝ Վարդան Ղապարեան եւ շուէտացի Թոմաս Պիտըր մրցումին կը հետեւէին թրիպիւնէն... Ստորեւ՝ Բ. դասակարգի ախոյեանութեան 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները. Ահլի Սայտա - Իսլահ 0-0 Ռիատա Ուալ Ատապ - Նահտա 2-2 Հ. Մ. Ը. Մ. - Իժթիմաի 1-1 Հըրրիէ - Հ. Մ. Ը. Մ. 2-2 Ռասիկ - Մահապպա 4-2 Ծապ. Թրիփոլի - Թատ. Նապաթիէ 0-2

Հակառակ իր հապարտոր համակիրներուն ներկայութեան, Հ. Մ. Ը. Մ. կորսնցուց երկու անոլ դէտեր, թէեւ ան կը շարունակէ մնալ ցարդ անպարտելի միակ խումբը:

Ստորեւ՝ Բ. դասակարգի ախոյեանութեան 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները. Ահլի Սայտա - Իսլահ 0-0 Ռիատա Ուալ Ատապ - Նահտա 2-2 Հ. Մ. Ը. Մ. - Իժթիմաի 1-1 Հըրրիէ - Հ. Մ. Ը. Մ. 2-2 Ռասիկ - Մահապպա 4-2 Ծապ. Թրիփոլի - Թատ. Նապաթիէ 0-2



Հ. Մ. Ը. Մ.ի նշանակած կողմ՝ Իժթիմաիի բերդէն ներս (Լուսանկարները՝ Սթիւտիօ Ֆոթօ ՏԻԳՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ)

ԱՌԵԹԻԶՍ

ՖԵՆՖԱՆՈՎԱՅԻ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇԸ՝ ԶՈՂՈՎ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼՈՒ ՄԱՐԶԻՆ ՄԷԶ

Պիր-մինկիէ-մի մէջ (Անգլիա) տեղի ունեցող աշխարհի աթլէթիկ միջազգային մրցումներուն, որոնք տեղի կ'ունենան զոց դաշտերու մէջ, երէկ, ռոնիս



Ֆենֆանովա

Սվեթլանա Ֆենֆանովա ձողով բարձրութիւն ցատկելու մէջ աշխարհի նոր մրցանիշ մը հաստատեց, երբ արձանագրեց 4,80 մ. արդիւնք մը: Նախկին մրցանիշը կը պատկանէր ամերիկացի Սթեյսի Տրակիլայի, որ այս ամսուան սկիզբը Պոսթընի մէջ տեղի ունեցած Միացեալ Նահանգներու ախոյեանութեան մրցումներուն արձանագրած էր 4,78 մ. արդիւնք մը:

Նշենք, թէ բաց դաշտերու մէջ աշխարհի մրցանիշը կը պատկանի Տրակիլայի՝ 4,81 մ.:

Աշխարհի նոր մրցանիշ մը հաստատելով, Ֆենֆանովա քառասուն հազար ամերիկեան տոլար մը շահելէ բացի (առաջին դիրքին համար), շահեցաւ նաեւ յիսուն հազար ամերիկեան տոլար՝ իր հաստատած նոր մրցանիշին համար:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՍՏՅՆՔԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ ՄՏՔՈՎ ԹԵՐԱՆԸ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ԶՈՒՄԹՆՈՅ ԿԵԴՐՈՆ»

ԿՈՉ

Ընկերութիւնը 1987ին, Լիբանանի Էյա Կամայնի Ընկերային Ծառայողներու Միութիւնը կը հիմնէր «Զուարթնոց Կեդրոն»ը: Ընկերակիցներու այս բոլոր կու գար փոխարինելու 17 տարիներէ ի վեր փակած, հայկական միակ՝ Մտքով Թերան Մանուկներու հաստատութիւնը: Նախաձեռնողները ունեն յարկաւ հաստատ գրաւակա՞ն հաւատք աւստուած եւ վստահութիւն հայուն 1700 ամեայ ծառայական առաքելութեան ոգիին:

Անցնող 15 տարիներուն ընթացքին «Զուարթնոց»ի սիրոյ շրջանակը հետզհետ ընդլայնեցաւ: Այսօր հայ իրերէր երեք պետերուն կողքին՝ հայկական եկեղեցական, հասարակական, բարեսիրական, մշակութային թէ կրթական հաստատութիւններուն, ինչպէս նաեւ ժողովուրդի զանազան խաւերուն համար «Զուարթնոց» շոշափելի իրականութիւն դարձուցած է մտքով Թերան հայ մանուկին, պատանին ու երիտասարդին ինքնութիւնը:

Այս հանգրուանին կը փափաքենք մեր սրտագին երախտագիտութիւնը յայտնել մեր ազգայնականներուն ցուցաբերած սերտ գործակցութեան համար ընդհանրապէս եւ յատկապէս՝ այս առիթը բոլորին ունեցած անզուգական բարոյական եւ նիւթական ներդրումին նկատմամբ:

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, թէ «Զուարթնոց Կեդրոն»ի 15 ամեակը կը զուգահեռ կ'ընդլայնեցաւ: Զեր սիրոյ լուսնները նպաստելով Կեդրոնի առաքելութեան զարգացման՝ անկասկած պիտի ջերմացնեն ձեր հոգիները:

Զեր նուիրատուութիւնները կրնաք կատարել ուղղակիօրէն «Զուարթնոց Կեդրոն»ին կամ հետեւեալ բարեսիրական հաստատութեանց միջոցաւ.

- «Զուարթնոց Կեդրոն» 01-446442
- Ճիւղեան Յիշատակի Զեմարկ 01-257890
- 01-261008 եւ 01-257890
- Լ. Օ. Ն. 01-253793
- Գարակոզեան Հիմարկ 01-268803
- Հ. Բ. Ը. Մ.ի Դարձանատուն 01-443799

ԾԱՆՕԹ.- Նուիրատուութիւնները կատարել միայն փոխան պաշտօնական ստացագիրի: Կեդրոնը ուրիշ ձեւով հանրային հանգանակութիւններ չի կատարեր: Կեդրոնը մեծ հաճոյքով կ'ընդունի ձեր այցելութիւնը, ժամադրութեամբ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

RENT AND SALE

•Over Bed Table

•All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ԶՈՒՑԱՍՐԱՐՈՒՄ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ
ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ
ՇԵՆ. (02) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.

ՏԵՂԻՆԻՆԵՆԱՅ 27, 28, 29, 30 Մարտ, 3, 4, 5, 6, Ապրիլ 2003, Երէկոյեան ժամը 8:30ին, ցերեկոյթ 6 Ապրիլ ժամը 4:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» բառերասարահին մէջ:

•Տոմարը ապահովելու համար դիմել՝ Հ. Բ. Ը. գրասենյակէն, «Տեմիրձեան» կեդրոն, վարչական անդամներէն եւ ելոյթի օրերը կ'ընեն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- 1.- Հոգեբուական ինքնադարձանում (օգնութիւն, խորհուրդ եւ հետեւողականութիւն)
- 2.- Բրուտագործարան (Atelier de poterie) (դասընթացք, արտադրութիւն, բուժական արուեստ)

Հասցէ.- Մխիթարեան վանք, Հազմիէ, Pain d'Or կից (հեռ. 05/451115)

Օրեր.- Երեքշաբթի եւ Ուրբաթ ժամը 8:00էն 11:30-ը եւ 16:00էն 20:00. Ժժ Արզումանեան (հեռ. 05/451630)

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. «ՎԱՆՔԱՎ ՓՈՓՈՒՄԱՆ» ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ

Կը ներկայացնէ՝
ՅԱՎՈՒՐ ՊԱՐՈՆԵԱՆԻ

«ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ» Ը

Հովանաւորութեամբ՝
Հ. Ե. Ը. Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Բեմադրութեամբ՝
ԵՐՈՒԱՆԴ ՂԱԶԱՆՃԵԱՆԻ
(Հայրենի վաստակաւոր բեմադրիչ)

Տեղի կ'ունենայ 27, 28, 29, 30 Մարտ, 3, 4, 5, 6, Ապրիլ 2003, Երէկոյեան ժամը 8:30ին, ցերեկոյթ 6 Ապրիլ ժամը 4:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» բառերասարահին մէջ:

•Տոմարը ապահովելու համար դիմել՝ Հ. Բ. Ը. գրասենյակէն, «Տեմիրձեան» կեդրոն, վարչական անդամներէն եւ ելոյթի օրերը կ'ընեն:

